ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ԿՈՌՅԱՆ
ԽԼՈՒԹՅԱՆ ԾՈՎԸ 3

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀԱՎԱՏԻՆ ՀԵՆՎԱԾ 15

ԱՇԽԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԸ 22

ՀՈՎԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ (հատված վեպից) 24

ԷՏՅԵՆ ՎԵՌՀԱՍԵԼՏ

ԿԱՐՃ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ
ԱՆՍՈՎՈՐ ՀՅՈՒՐԸ 33
ՓՈՂՈՑԻ ԾԱՅՐԸ (թարգմ.՝ Ալեքսանդր Թոփչյանի) 36

ԽՈՒԼԻԱՆ ՍԱՆՉԱ
ՍԻԼՈՒԵՏ 2 39
ԳԻՐԸ 40
ԿՅԱՆՔԸ ՍԽԱԼՄՈՒՆՔ Է (թարգմ.՝ Անահիտ Մարգարյան-Անտոնյանի) 41

ԲՈՐԻՍ ԶԱՅՑԵՎ
ՊԱՍՏԵՌՆԱԿԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ 43
ՄԵԿ ԱՆԳԱՄ ԵՎՍ ՊԱՍՏԵՌՆԱԿԻ ՄԱՍԻՆ (թարգմ.՝ Կարինե Մեսրոպյանի) 52

ՆԱՆԵ
ԸՆՏԱՆԻՔԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ԹԻՐԱԽՆԵՐԻՑ ՄԵԿԸ 59

Հրատարակված է պետական աջակցությամբ

Խմբագիր՝ Սուսաննա Հարությունյան

ԿԱՅԱՐԱՆ (2019.4)։ Գրական հանդես.- Եր.։ Էդիթ Պրինտ, 2019.- 64 էջ։

Կայարան
գրական ամսագիր

ISSN 1829-4391

© Էդիթ Պրինտ, 2019

ՆԱՐԻՆԵ ԿՈՌՅԱՆ

ԽԼՈՒԹՅԱՆ ԾՈՎԸ

I

Արթնացավ: Անսովոր աղմուկ էր: Թվաց՝ Նազան տատի տանը տեսած խխունջի հսկայական խեցին է ականջին: Գիտեր, որ քնած չէ, սակայն պիտի համոզվեր: Հակոբը դժվարությամբ բացեց ասես սոսնձված կոպերն ու լարեց լսողությունը, սակայն ընդարձակ սենյակի առաստաղին ու պատերի վրա լողացող լույսերի և ստվերների իրար հաջորդող տարօրինակ խաղը ընդհատեց մտքերը: Դեռ անկողնում ձեռքն ակամա սահեցրեց մահճակալի կողքի պատն ալիքող տեսարանի վրայով ու սկսեց զարմանալ:

Ասես մահաթմբիրի մեջ՝ քայլեց քնած տղաների մահճակալների մոտով՝ մոռանալով հագնել մաշված հողաթափերը: Ոտքերը սահում էին սառը հատակի խամրած հայելու վրայով՝ մինչև ելքի դուռը: Միջանցքում աղմուկն ավելի լսելի էր: Այն ինչ-որ տեղ ներքևում էր՝ գուցե առաջին հարկում կամ էլ դրսում, սակայն այն ամեն դեպքում հեռու չէր. չէր կարող հեռու լինել:

Չհասկացավ՝ ինչպես դուրս եկավ շենքից: Սակայն այն, ինչ տեսավ, հասկանալու կամ չհասկանալու հետ որևէ կապ չուներ. կղզիացած բլրի վրա ծվարած շինության ստորոտում ծով էր: Մտածեց, որ լուսնի ահռելի սկավառակը երևի իսկապես անքունների արևն է, որ գուցե նույն Նազան տատի սիրելի բանաստեղծը մի օր կամ մի գիշեր իր նման եղել է հեքիաթային այս

ծովի ափին ու խոսել լուսնի հետ: Արևը ծովի ափը թրջող, ասեղնագործ ժանյակների նմանվող փրփուրով եզրագծված մանրիկ ալիքները կապտականաչ էր ներկում՝ տարուբերելով վերևից իջնող լույսի մելամաղձոտ արահետը: Ոտնաթաթերը շոյող ջուրը տաք էր, սակայն անբացատրելի մի զգացում հովվերգական գիշերային ցերեկվա հետ միասին ուրիշ բան էր հուշում. թվում էր, թե և՛ ծովը, և՛ լուսինը ավելի շատ իր ներսում են, քան դրսում: Հանկարծ հասկացավ, որ անքուններն աշխարհի միայնակներն են, և որ ինքն էլ պարզապես նրանցից մեկն է:

Իսկ եթե մեռե՞լ է քնի մեջ՝ Նազան տատի անհասկանալի երազանքի պես...

Մտածեց ու ոչինչ չզգաց: Հանկարծ հիշեց այն օրը, երբ ծովն առաջին անգամ տեսավ՝ նույնքան կենդանի ու իրական, որը պարզապես ցեխաջրի անսահման և ցավալիորեն իրական հեղեղ էր: Սակայն այն ծովն ամեհի էր ու ամենակուլ, որ սպառնում էր խորտակել իրեն ու ամեն բան, ինչ թանկ էր իր համար: Հիշեց, որ անզոր էր, անզոր ու փոքր. երեխա էր...

Հակոբն անսպասելի կծկվեց ու ափերով սեղմեց ականջները. «Մի՞թե լսում եմ, կրկին... լսում եմ....»:

- Ես այլևս խուլ չեմ.....,- որքան թոքերում ուժ կար՝ գոռաց ու .... բացեց աչքերը:

II

Ծփոթված էր:

Արտասովոր առավոտը նույնքան արտասովոր օր էր խոստանում:

Բժշկին էին սպասում: Արտառոց լուրը բոլորին վաղուց ոտքի էր հանել: Դասերի մասին ոմանք մոռացել էին, ոմանք էլ ձևացնում էին, թե մոռացել են: Միջանցքներում փսփսոց էր, անկյուններում՝ մատների անհանգիստ խաղ, իսկ բժիշկը, որ խուլ ու համրերի գիշերօթիկում ընդամենը կես դրույքով էր ձևակերպված և հազվադեպ էր տեղում լինում, ուշանում էր:

- Փաստորեն, լսում ես, լսողությունդ ինչ-որ հրաշքով վերականգնվել է,- ասես ինքն իր հետ խոսեց գիշերօթիկի տնօրենն ու աչքերը կկոցելով՝ դեմքին նայեց:- Բայց, ախր, ինչպե՞ս:

Մեղքի անտրամաբանական զգացումը մարմինը մի ոտքից մյուսին էր հենում, և ինքն էլ չհասկանալով՝ ինչի համար, փորձում էր արդարանալ.

- Չգիտեմ, պարոն Դիլոյան, բայց ես իսկապես լսում եմ Ձեզ, այլապես չէի պատասխանի:

- Գուցե կատակու՞մ ես: Ասեմ, որ դառը և հիմար.... Իսկ եթե պարզվի, որ շուրթերս ես կարդո՞ւմ: Գիտես չէ՞....

Կայարան գրական ակումբ

Հակոբը չհամբերեց: Նա մեջքով շրջվեց գրասեղանի ետևում նստած ու գլուխն ափերով բռնած տնօրենի կողմն ու ասաց.

- Խոսե՛ք, պարոն Դիլոյան, հարցեր տվեք, ես Ձեզ չեմ նայում:

Դիլոյանը ելավ տեղից ու քայլեց դեպի պատուհանը.

- Քանի՞ տարի է, որ այստեղ ես:

- Արդեն չորրորդ տարին է:

Տնօրենը բացեց օդանցքը:

Թվաց՝ ետևում կանգնած մարդը ծանր հոգոց հանեց:

Հակոբը դարձյալ շրջվեց՝ այս անգամ զրուցակցի կողմն ու դանդաղ բարձրացնելով հայացքը՝ նայեց նրա աչքերի մեջ.

- Պարոն Դիլոյան, ինչ որ վատ բան եմ արե՞լ: Չէի ուզենա որևէ մեկին ցավ պատճառել: Ես գիտեմ՝ դա ինչ է նշանակում:

Այս անգամ շփոթվելու հերթը տնօրենինն էր.

- Ո՛չ, ո՛չ, ի՞նչ ես ասում: Պարզապես այսպիսի արտառոց դեպք մեր դպրոցի պատմության մեջ դեռևս չէր եղել: Կներես, տղաս:

Հակոբը ոչինչ չպատասխանեց: Նա մի քանի վայրկյան էլ սպասեց, ապա կրկին դիմեց Դիլոյանին.

- Կարո՞ղ եմ գնալ:

- Այո, այո, իհարկե:

Թվաց՝ տնօրենը շտապում է մենակ մնալ:

Հակոբը մեխանիկորեն ձեռքերն առաջ պարզեց ժեստերի օգնությամբ հրաժեշտ տալու համար, սակայն ժպտաց ու բացելով բերանը՝ հատ-հատ արտասանեց բոլոր հնչյունները.

- Ցը- տե-սու-թյուն:

Արդեն տնօրենի աշխատասենյակի դռան ետևում հասկացավ, որ գիշերվա զարմանահրաշ երազից թե արթնությունից հետո առաջին անգամ ժպտաց. «Ա՛յ քեզ բան, ինչու՞ են բոլորն այսքան խառնվել, ասես՝ դժբախտ պատահարի են ականատես եղել ու հիմա չգիտեն իրենց ինչպես պահել: Ուրախանալ է պետք: Մի՞թե չեն հասկանում, թե ես որքան երջանիկ եմ»:

Հակոբը հպարտորեն բարձրացրեց գլուխն ու ձեռքով արեց միջանցքում հավաքվածներին: Հետո սկսեց հիշողության մեջ մնացած ինչ-որ երգի բաղաձայն եղանակ սուլել, ապա վազելով սանդուղքների կողմը՝ ճաղաշարի բազրիքի վրայով սահեց ցած:

Օրն ուրիշ էր, քամին՝ ուրիշ:

Ներքևում քաղաքն էր, իր տունը: Քաղաքի աղմուկը քամու հետ մտավ ականջների մեջ ու խուտուտ տվեց: Մոռացված կարոտներ եկան, մտան աչքերի մեջ ու սպառնացին ցած թափվել:

III

Ճանապարհը լավ գիտեր, ծանոթ էր, սակայն հիմա այն այնքան աղմկոտ էր, որ գլուխը պտտվեց: Ախր կարող էր զանգել.... Նա մի պահ կանգ առավ, ձեռքով շփեց ճակատն ու ժպտաց: Քանի ամիս է՝ ոչ ոքի չի տեսել: Իրեն էլ այցելության չեն եկել: Միայն հիմա մտածեց այդ մասին ու անհանգստացավ: Գուցե ինչ-որ բաՆ է պատահել:

Դեռ երկար պիտի քայլեր, դրա համար էլ փորձեց ցրել անհանգիստ մտքերն ու արդարացում գտնել ծնողների, քույրերի համար: Երբ աշխարհը նոր էր փակել ձայների ողջ ներկապնակն իր համար, և կարոտը շուտ-շուտ էր նրան գիշերօթիկից տուն տանում, միևնույն է, նայելով հարազատների դեմքերին, ոչինչ չէր հասկանում: Գիտեր, որ նրանք կաշվից դուրս են գալիս, փորձում իրեն բան հասկացնել, բայց ապարդյուն: Դեռ չգիտեր, շուրթերը կարդալ դեռ չէր սովորել: Ի վերջո, հերթական անգամ հեռուստացույցի առջևից դժկամությամբ վեր կացող հոր տեսքից հասկանում էր, որ գնալու ժամանակն է, որ բոլորին հոգնեցրել է, որ ինքն այստեղ՝ լսողների աշխարհում տեղ չունի: Մայրն արտասվախառն հայացքով նրան ճանապարհ էր դնում՝ ետևից ծածկելով տնակի խարխլված դուռը, և վերջ:

Սակայն այդքան շուտ գիշերօթիկ վերադառնալ չէր ուզում, որովհետև սովորույթի ուժով շարունակում էր խոսել, երբ շուրջը իրեն ոչ ոք չէր լսում, իսկ ժեստերի լեզուն դեռ յուրացնել էր պետք: Նա անլսելի թակում էր ծեր հարևանուհու տնակի դուռն ու սպասում:

- Հակոբս, Հակոբս է եկել,- Նազան տատն ափերն իրար էր զարկում, և ժպիտն էլ ավելի էր կնճռոտում նրա թառամած դեմքը:

Երբեմն թվում էր, թե ինքը լսում է այդ զարկը: Իսկ գուցե սրտի անսովոր զարկերն էին ցնցում կծկված ստոծանին, սակայն նա համոզված էր, որ դրանք հենց ծեր կնոջ ափերի զարկերն են բախվում թմբկաթաղանթին: Մի քիչ էլ, և ինքը կլսի նաև նրա ձայնը:

Ծեր կինը նրան ներս էր տանում՝ շարունակելով խոսել, սեղան էր պատրաստում՝ հանելով պահած-պահպանած քաղցրավենիքն ու էլի շատ ու շատ համով բաներ: Սիրտն ուրախանում, թեթևանում էր, սակայն ետդարձի ճանապարհին հերթական անգամ մեղադրում էր իրեն՝ համոզված լինելով, որ բոլոր այս այցելություններն իրականում հենց Նազան տատին տեսնելու համար էին միայն, որ ընտանիքն օրեցօր ավելի ու ավելի էր հեռանում իրենից, որ մի օր էլ գուցե իսպառ մոռանար իրեն, ասես՝ ինքը չէր էլ եղել: Եվ հիմա ամիսների լռությունից հետո նա լսում է սեփական տնակի բացվող դռան անշուք ու հուսահատ ճռռոցը:

Կայարան գրական ամսագիր

Առաջինը մորը տեսավ՝ ինչպես միշտ ձեռքերը լվացքի օճառաջրի մեջ: Մայրը դեռահաս աղջնակի պես վեր թռավ ու վազեց դեպի որդին: Մոր գրկի մեջ Հակոբը հասկացավ, որ ընտանիքը հերթական անդամին է սպասում, ու տխրեց:

- Ո՞վ է,- հայրն էր:- Չեն թողնի, որ մարդ մի քիչ քնի: Էդ ինչ ղալմաղալ է:

- Հակոբս է եկել, տղես...

Մոր ձայնը կտրտվում էր, բայց ինքը լավ գիտեր, որ իր լսողությունը դրանում մեղավոր չէ:

- Ո՞նց ես, բալես, քոռանամ ես՝ նիհարե՞լ ես,- մայրը պատասխանի չէր էլ սպասում:

- Հա, տղեդ է եկե՞լ,- հայրը երևաց տնակի մյուս հատվածից:- Էնպես ես խոսում, ասես քեզ լսելու է, այ տնաշեն: Հարյուր եմ ասել, քյառացել է տղեդ, քյառացել.....

Հակոբը ազատվեց մոր ջերմացնող գրկից ու հորը նայեց.

- Քյառ չէ՝ խուլ: Ավելի շուտ՝ խուլ էի, հիմա՝ չեմ:

Ծնողները զարմանքից մի պահ անշարժացան:

- Եկա ձեզ տեսնեմ, հարցնեմ՝ ինչի՞ չէիք գալիս.....

Մայրը ձեռքերն աչքերին տարավ ու կրկին գիրկը նետվեց.

- Մեռնեմ Աստծո զորությանը: Գլուխս ամեն անգամ բարձին դնելիս՝ մայրիկ-մայր Աստվածածին էի կանչում, խնդրում, որ բալիս սաղ-սալամաթ դարձնի...

- Լավ, հասկացանք, տղեդ եկել է, էլ քյա... խուլ չի, էլ լացդ ո՞րն է,- հայրն ուրախ էր:- Հիմա կօգնի, որ ոտի կանգնենք: Տունը ո՞վ պտի պահի, ստամոքսիս խոցը, գիտես, ինձ վաղուց ոտից-ձեռից գցել է:

Հակոբը, դեռ մոր գրկում, հանկարծ մտաբերեց այն ճակատագրական օրվա բոլոր մանրամասները, երբ ձայների աշխարհն իր համար այլևս դադարեց գոյություն ունենալ:

Ողջ օրը, ինչպես միշտ, շշեր և ստվարաթղթի արկղեր էր հավաքում՝ շրջելով քաղաքի փողոցներով, սպասելով խանութների դռների մոտ երանելի այն պահին, որ հենց իրեն կհասնեն խանութների դռներից դուրս նետվող արկղերը, և այդ օրն իրենց փոքրիկ տնակում տաք ու հարմարավետ կլինի բոլորի համար: Պլաստմասե շշերը կհանձնի թաղամասի ծայրում դրանք գնող տղամարդուն, որի վրայից մշտապես այրված ռետինի զզվելի հոտ էր գալիս, որ փողը կտանի մոտակա կրպակն ու հոր համար ծխախոտ գնելուց հետո՝ նաև ուտելիք կառնի, որ.... որ.... որ....

Հանկարծ մեծ ու փոքր քույրիկների աղմկոտ հեղեղը ներս լցվեց, ու մտքերն ընդհատվեցին: Հազիվ կարողացավ նստել աթոռին. համբույրների,

գրկախառնությունների տարափը նրան ոտքի վրա չէր թողնի: Հիմա հասկացավ, թե որքան էր կարոտել նրանց:

Մայրն արագ սեղան պատրաստեց, ու նստեցին հացի:

Սեղանն, ինչպես և առաջ էր, աղքատիկ էր: Ոչինչ չկերավ, ստեց՝ ասելով, որ կուշտ է՝ ինչպես նախկինում էր անում, երբ հասկանում էր, որ հատկապես մայրը քաղցած է մնալու:

- Աչքիս՝ էդ գիշերօթիկում ձեզ լավ էլ ուտելիք են տալիս: Բախտդ փաստորեն բերել է, ասա, որ քյառա... խլացար,- հայրը միաժամանակ ծամելով՝ սկսեց բարձրաձայն ծիծաղել:

Մյուսները լուռ էին՝ նույնիսկ երեք տարեկան փոքրիկը, որին ինքը աղոտ էր հիշում, զույգ թաթիկներով ծածկեց աչքերն ու գլուխը մոր գոգին դրեց:

- Հա, բա ոնց, մեծ, շատ մեծ բախտավորություն էր,- չդիմացավ:

- Լակոտ, էդ ո՞նց ես հորդ հետ խոսում: Իմ տանը ո՞նց ես հետս խոսում, այ պիդարազդ,- տղամարդը զայրացած ելավ տեղից ու սեղանին շպրտեց հավի մերկացած ոսկորի կտորը:

- Ի՞նչ եղավ քեզ, այ մարդ,- թափ հավաքող լարվածությունը փորձեց թուլացնել մայրը:

- Ձենդ, ես քու մոր ...- բղավեց հայրը:

Աղջիկները գլխիկոր ու սուսուփուս դուրս եկան:

- Հակոբ ջան, գնա, գլխիդ մեռնեմ, գնա, հորդ մի բան կպատահի, կատաղել է, կմնանք անտեր,- թախանձեց մայրը:

Չէր հասկանում՝ ինչ է իր հետ կատարվում, սակայն գնալ չէր ուզում, պարզապես չէր կարող.

- Կգնամ, կգնամ, մամ ջան, բայց սա է ձեր տերը՞, էս ձրիակեր անասունը, որ սուտ հիվանդություն է հնարել, որ դիվանից քամակը վեր չքաշի.....

Արդեն հևում էր, կոկորդն արտասուքից սեղմվել ու պատառոտում էր բառերը.

- Թող սատկի, թող սատկի, որ փորդ էլի լցրել է, ինչ է թե նպաստ ստանա, շատ նպաստ ստանա: Բա մենք՝ դու, ես, էս երեխեքը, մեղք չե՞նք: Ի՞նչ են տեսել էս կենդանուց, դու ի՞նչ ես տեսել... Թե՞ իրա պապիրոսի համար շիշ հավաքողն ու կարտոն հավաքողն ինչքան շատ, էնքան լավ...

- Ձենդ, շան ծիծ կերած ....

Հայրն արդեն ճանկել էր փայտյա ծանր աթոռակն ու պատրաստվում էր վրան շպրտել, սակայն մայրը հասցրեց տարածել ձեռքերը՝ փակելով հարձակվողի տեսադաշտը:

- Գնա, Հակոբ ջան, գնա, կյանքիդ մեռնեմ,- մի կերպ կանխելով հոր առաջխաղացումը և արցունքների միջից մերթ իրեն, մերթ ամուսնու կողմը նայելով՝ կրկնում էր մայրը:

Կայարան գրական ամսագիր

Մնում էր դուրս գալ ու շրխկացնել հազիվ կենդանության նշաններ ցույց տվող տնակի դուռը:

IV

Ոտքերն ակամա տարան այնտեղ, ուր իր վերքերը միշտ ամոքվում էին:

Ավաղ: Նազան տատի դուռը փակ էր:

- Տատը հիվանդ էր, տղեն համոզեց, տարավ իր տուն՝ արդեն երեք ամիս է,- մեծ քույրն էր:

Հակոբը գրկեց քրոջ ուսերն, ու տեղավորվեցին տնակի կողքի փոքրիկ նստարանին, որտեղ արևոտ եղանակին սիրում էր նստել ծեր կինն ու գիրք կարդալ: Հիշեց, որ Նազան տատը հրաժարվել էր որդու հետ ապրելու՝ պարբերաբար իրեն առաջարկվող գաղափարից: Այստեղ էր եղել նրա տունը, որ փլվել էր երկրաշարժի ժամանակ՝ իր հետ տանելով նաև նրա ամուսնուն: Այստեղ էր, որ առաջին անգամ նստեց ու զրուցեց ծեր կնոջ հետ ու սիրեց նրան, այստեղ նրանից ստացավ իր առաջին գիրքն ու զարմացավ. աշխարհն ավելի մեծ էր, քան ինքն էր կարծում, և տարբեր՝ այնքան տարբեր: Մի՞թե այդպես լինում է:

Անիմանալի մի թախիծ սեղմեց կուրծքը.

- Գիտե՞ս, թե որտեղ է ապրում Նազան տատի տղեն:

- Չէ, չգիտեմ:

- Հեռախոսի համարն էլ չգիտե՞ք:

- Չէ:

Հակոբը քրոջը հրաժեշտ տվեց ու վեր կացավ:

- Հակոբ, երանի քեզ... երանի ես էլ խլանայի...,- քույրն ամուր սեղմեց ձեռքն ու ներքև ձգեց:

Ծփոթվեց:

Ամաչեց:

Փախավ, որպեսզի վերադառնա այնտեղ, որտեղից եկել էր ու չէր ուզում վերադառնալ:

Երկար պտտվեց քաղաքում այն թաքուն հույսով, որ Նազան տատին գուցե տեսնի: Չտեսավ:

Թվաց՝ բոլորն իրեն էին սպասում. գիշերօթիկի դռների մոտ ով ասես չհայտնեց Դիլոյանի՝ իրեն անհապաղ գտնելու և տեսնելու լուրը:

Երբ զգուշորեն բացեց տնօրենի աշխատասենյակի դուռը, դեպի իր կողմը շրջվող գլուխների ամենատարբեր հայացքներից հասկացավ, որ բոլորն իրեն են սպասում:

- Ներս արի, Հակոբ,- Դիլոյանի ձայնի մեջ տագնապ կար:

Տագնապի այդ զգացողությունն արագ իրեն փոխանցվեց:

Սենյակի ոչ այնքան երկրաչափական կենտրոնում կանգնած՝ իրեն որսորդներով շրջապատված վայրի գազանի նմանեցրեց, ու խուճապն անցավ: Պիտի պաշտպանվեր, բայց ինչի՞ց... Գուցե հարձակվե՞ր, բայց ինչու՞ ....

- Պարոն Դիլոյան, չեմ հասկանում՝ ինչու՞ եք ինձ կանչել, երբ այնքան ակնհայտ է, որ տղայի լսողությունը վերականգնվել է,- բժիշն էր ժամանել:

- Այդքան ակնհայտը ակնհայտ, պարոն Մանվելյան ջան, բայց գուցե սա ժամանակավոր երևույթ է, գուցե վաղը, մյուս օրը լսողությունը նորից անհետանա:

Հակոբը տնօրենի ասածը չհասկացավ: Թվաց, թե վերջինս ուրախ կլիներ, եթե ինքը կրկին խլանար և խլանար ընդմիշտ:

- Լավ,- ասաց բժիշկն ու բացեց փոքրիկ պայուսակը:

Իրեն լավ ծանոթ էին բժշկի պայուսակից դուրս բերվող բոլոր գործիքները՝ մանավանդ ճակատին ամրացվող ճագարանման լուսարձակը, որ իրեն մի ժամանակ շատ էր դուր գալիս:

Մանվելյանը երկար զննեց՝ աջ ու ձախ պտտելով մարմինը, նույնիսկ ականջները մի քանի անգամ մաքրեց, սակայն նրա հոգոցն արդեն ամեն ինչ ասաց.

- Ավելացնելու ոչինչ չունեմ: Լսողական ապարատն ամբողջությամբ առողջ է: Հրաշք:

Լռությունը կախվեց ու ծանրացավ սպասողների վրա, և Հակոբին մի պահ թվաց, թե այն չարաբաստիկ օրվա ցեխաջուրը կրկին փակեց ականջները:

- Լավ, դու գնա, Հակոբ ջան,- առաջինը կրկին Դիլոյանը խոսեց:

Միջանցքում ոչ ոք չկար: Միաժամանակ և չէր ուզում, և ուզում էր լսել սենյակի ներսում հավաքվածների խոսակցությունը: Ի վերջո կարողացավ համոզել իրեն լսել այն, ինչ ասելու էին և ինչն իրեն էր վերաբերելու: Նա ականջը մոտեցրեց տնօրենի աշխատասենյակի դռան նեղ ճեղքին ու շունչը պահեց:

- Մանվելյան ջան, ախր, ո՞նց կլինի...,- Դիլոյանն էր:

- Փոխանակ ուրախանաք՝ երեխան այլևս հաշմանդամ չէ, ողբերգություն եք սարքել, - հակադարձեց բժիշը:

- Ողբերգություն չէ, ի՞նչ է: Դպրոցի համար ամեն երեխա ոսկու գին ունի: Հակոբն էլ որ գնաց, գիշերօթիկը հաստատ կփակեն: Առանց այն էլ հազիվ ենք պահում,- ձայնն անծանոթ էր, սակայն խոսողին տեսնելու հնարավորություն չկար:

- Ճիշտ է ասում Սաքանյանը, ատամներով ենք պահում,- շարունակեց Դիլոյանը, և պարզ դարձավ, որ մինչ այդ խոսողը մաթեմատիկայի ծեր թոշակառու ուսուցիչն էր:

Կայարան գրական ամսագիր

- Պարոն Մանվելյան,- այս անգամ խոսողը կին էր,- Դուք հասկանու՞մ եք: Էս խեղճ երեխեքը մի կողմ, բա մե՞նք.... Մենք բոլորս, ախր, գործազուրկ ենք դառնալու... Ո՞ւմ ենք մենք պետք, որտե՞ղ ենք աշխատելու, որ տուն, երեխա պահենք....

Կինը կարծես հուզվեց, և խոսքն ընդհատվեց:

- Իմիջիայլոց, Դուք էլ, պարոն Մանվելյան... Թե՞ էս հաստատությունից Ձեր ստանալիքն էնքան քիչ է, որ թքած ունեք:

Քննարկման վերջին մասնակցի խոսքը կոպիտ էր, կծու:

Հակոբն զգաց, որ ամբողջ մարմնով դողում է: Ինչու՞: Ինչու՞ հենց իրենով են պայմանավորված այսքան մարդկանց ճակատագրերը: Ո՞րն է իր մեղքը:

Նա արագ վազեց դեպի ննջարան, ընկավ մահճակալին ու լաց եղավ:

Հիշեց, թե ինչպես տարիներ առաջ անձրևի ու ցեխաջրի հեղեղն իրեն բաց դիտահորի երախը նետեց ու դուրս գալու ոչ մի հնարավորություն չտվեց. խնամքով ծալված ստվարաթղթե արկղերի հսկայական կույտը, որ ուսապարկի նման միշտ մեջքից էր կախում, թրջվել էր, ծանրացել ու իրեն ներքև էր քաշում: Չէր հիշում՝ ինչպես են իրեն այնտեղից դուրս հանել, սակայն ցավը մոռանալ հնարավոր չէր: Հիվանդանոցից արագ դուրս գրեցին. գումար չկար: Տանը, անկողնում պառկած, ականջներից հոսող թարախից միայն բարձի երեսներն էր թրջում ու տնքում: Մի օր էլ թվաց, թե բոլորն իրեն լքել են, անգամ Նազան տատը, որ ինչ-որ դեղեր էր բերում, խնամում և կերակրում էր իրեն: Չէին լքել: Ինքն էր լքել լսողների մոլորակը: Նազան տատի բերած բժիշկն էլ ոչինչ չկարողացավ անել: Ուսերը վերուվար արեց ու գնաց: Հիշեց, թե ինչպես ծեր կինը թաքուն լաց եղավ: Մոր լացը չտեսավ. նա լաց լինելու ժամանակ չուներ, շուտով հերթական փոքրիկին էր աշխարհ բերելու: Գիշերօթիկ էլի Նազան տատը տարավ. իր, գուցե նաև մյուսների տառապանքին չդիմացավ:

Ուսը ցնցեցին:

Դասընկերն էր:

Պիտի տնօրենի մոտ գնար:

V

- Ներս արի, տղաս, նստիր,- Դիլոյանը շփոթված էր:

Որոշեց կանգնած մնալ:

Հասկացավ, որ դիմացինը դեռ չի կարողանում ձևակերպել ասելիքն, ու նախաձեռնությունն իր ձեռքը վերցրեց.

- Գիտեմ, պարոն Դիլոյան, ես բոլորիդ անհարմար վիճակի մեջ եմ դրել: Փաստորեն, ես մեղավոր եմ, որ առողջացել եմ, որ այլևս խուլ չեմ:

Տնօրենը չէր սպասում: Նա բռնվելով գրասեղանից՝ դանդաղ նստեց:

- Տեսնես՝ ո՞ր օրենսգրքով են ինձ մեղադրանք ներկայացնելու: Ախր, մեկի փոխարեն, քանի մարդու եմ վատություն անում,- Հակոբն ակամա հեգնում էր:- Գիշերօթիկն իմ պատճառով կփակվի, և Դուք այլևս տնօրեն չեք լինի, ուսուցիչ-դաստիարակներն անգործ կմնան՝ այսինքն՝ առանց մի կտոր հացի.... Հա, մի բան էլ կա: Ո՞նց ես չեմ ամաչում այսքան խուլ երեխաների մոտ լսող դառնալով: Մեղք է, մահացու մեղք:

Դիլոյանի ծնոտն անկառավարելի դողում էր:

- Ի՞նչ եք ինձնից ուզում: Ես չեմ ընտրել իմ լսել-չլսելը, որն արդեն ինքս էլ չգիտեմ՝ պարգև՞ է, թե՞ պատիժ:

Հասկացավ, որ այլևս անզոր է: Ծնկները ծալվեցին, և ստիպված նստեց.

- Հիմա երևի ուզում եք, որ ես նորից խլանամ: Դա եք ուզում, չէ՞:

Դիլոյանը ափերով ծածկեց դեմքը: Հետո վեր կացավ, անշտապ մոտեցավ փակագծի նման աթոռի վրա կուչ եկած նիհարավուն տղային ու ձեռքով բարձրացրեց նրա՝ արցունքներից թաց ծնոտը.

- Դու ի՞նչ մեղք ունես, որդի: Մեղավորը մենք ենք, որ էս տեսակ երկիր ենք ձեզ տվել ու չգիտենք, թե վաղն ինչ ենք ձեզ թողնելու: Կներես, կներես... Եթե կարող ես, ներիր:

Ոտքերը քարշ տալով՝ Դիլոյանը սենյակից դուրս գնաց՝ իրեն թողնելով մենակ:

Ամաչեց: Խղճաց:

Այս մարդն ի՞նչ մեղք ուներ...

Թևքով երեսը սրբեց ու ինքն էլ քայլեց դեպի դուռը:

Մարգարեացել էր: Բակում գտնվող երեխաներն իրենից բացահայտ խույս էին տալիս: Միայն առաջին դասարանցի փոքրիկ Մարիամը, դեմքն ամբողջությամբ ժպիտի մեջ, մոտ վազեց ու թափով գրկեց իրեն: Հակոբն համբուրեց երեխայի ճակատը: Մարիամիկը արագ բռնեց ձեռքն ու տարավ դեպի բակի մի անկյունում խմբված տղաների կողմը:

Հակոբը մտածեց, թե ինչպես է մյուսների աչքերին նայելու, սակայն տղաների վարանոտ գրկախառնությունները սթափեցրին նրան.

- Ես եմ, տղերք ջան, Հակոբն եմ ու վարակիչ չեմ, - մատներն օդում պարեցին, և վերջապես ինքն էլ ժպտաց:

Մի քիչ ֆուտբոլ խաղացին, մի քիչ բռնոցի, և արևը թեքվեց:

Մարիամիկը կրկին մոտ վազեց.

- Հակոբ, դռնապան Վահան պապն ասում է՝ վռազ արի:

Չմտածեց, այլևս չէր ուզում մտածել ու գնաց:

Ինչ-որ արկղ էին իր համար թողել: Դռնապանն ասաց, որ մի տղամարդ է

Կայարան գրական ամսագիր

բերել ու խնդրել, որ իրեն փոխանցեն: Առաջին հայացքից ոչինչ չասող, սովորական ստվարաթղթե արկղ էր: Մոտեցան նաև ընկերները, և միասին որոշեցին արկղի պարունակությունը ննջարանում նայել:

Գրքեր էին, ձայնապնակներ, խխունջի մեծ ու փոքր խեցիներ, Նազան տատի լուսանկարը և մի երկտող.

- Սա մայրս էր խնդրել, որ փոխանցեմ: Քեզ շատ էր կարոտում և վերջին օրերին անընդհատ քո մասին էր խոսում: Ապրես: Նրա համար լավ ընկեր ու որդի ես եղել: Ես չկարողացա: Լավ մնա:

Հակոբը կարող էր ոռնալ որքան սիրտն էր ուզում. ոչ ոք իրեն չէր լսի: Բայց կարծես լսեցին ու հասկացան նրա ցավը՝ այն ցավի նման, որ փակեց ականջներն ու ... բացեց աչքերը:

Նա ձեռքի ջղաձգումով դեն նետեց դատարկված արկղն ու կրծքին սեղմեց ծեր կնոջ թոշնած լուսանկարը:

Մի՞թե ստվարաթղթե արկղերից կարելի էր լավ բան սպասել ...

Հետո կտրուկ ելավ տեղից ու գնաց:

Տնօրենի սենյակում լռություն էր: Թակեց ու ներս մտավ:

Ասես ժամանակը կանգ էր առել. առավոտվա կազմը կրկին այնտեղ էր, և հասկանալի էր, որ իրեն հաստատ չէին սպասում:

«Երևի նորից են հավաքվել»,- մտածեց ու առաջ գնաց:

- Մի անհանգստանա, տղաս: Վաղը քո փաստաթղթերը կպատրաստենք, և դու մեզ հրաժեշտ կտաս,- տնօրենի ժպիտը չստացվեց:

- Մի բան եմ ուզում ասել, պարոն Դիլոյան: Կարելի՞ է,- հոգնած էր, սակայն խոսքը վճռական էր, նյարդային:

- Ասա տղաս:

- Ես կարծես նորից եմ կորցնում լսողությունս և դժվարությամբ եմ ընկալում ձայները:

- Ինչպե՞ս ...- սենյակն արձագանքեց:

- Այո, ես կարծես նորից եմ խլանում,- Հակոբը դիմեց մատների օգնությանը:

- Ինչպե՞ս,- կրկնեց ասես փոքրացած տնօրենը:

- Պարոն Դիլոյան, ես Ձեզ չեմ հասկանում: Եթե կարելի է՝ ժեստերի օգնությամբ ձևակերպեք Ձեր ասելիքը:

Այս անգամ էլ տղամարդու մատների ելևէջը ծածանեց ներկաների միջև խտացող լռությունը.

- Կստուգեն...

Տնօրենի խոսքը վեհերոտ էր ու միաժամանակ և իրեն, և մյուսներին էր ուղղված: Հակոբը շարունակեց.

- Գիտեմ, բայց ես համացանցում կարդացել եմ, որ խլության ոչ բոլոր պատճառներն են բացահայտված և բացատրելի:

Սենյակի հայացքներն այս անգամ թեքեցին ուղղությունն ու կենտրոնացան բժշկի վրա:

- Այո, իհարկե, բժշկությունն ամենազոր չէ, և հետևանքը միշտ չէ որ հայտնի է դարձնում պատճառը,- պատասխանեց Մանվելյանը:

Երբ ներկաների չդադարող բանավեճը սպառնում էր պատռել թմբկաթաղանթը, Հակոբը, առանց հրաժեշտ տալու, դուրս եկավ:

Միջանցքում իրեն էին սպասում: Այստեղ հայացքների անհանգստությունն ուրիշ էր:

Հ. Գ.

Արթնացավ: Անսովոր աղմուկ էր: Թվաց՝ Նազան տատի նվիրած խխունջի հսկայական խեցին է ականջին: Գիտեր, որ քնած չէ, սակայն պիտի համոզվեր: Հակոբը դժվարությամբ բացեց ասես սոսնձված կոպերն ու լարեց լսողությունը, սակայն ընդարձակ սենյակի առաստաղին ու պատերի վրա լողացող ստվերների իրար հաջորդող տարօրինակ խաղը ընդհատեց մտքերը: Դեռ անկողնում ձեռքն ակամա սահեցրեց մահճակալի կողքի պատն ալիքող տեսարանի վրայով ու դարձյալ զարմացավ:

Բոլորին պիտի արթնացներ. բոլորը պիտի տեսնեին անքունների արևն ու ծովի՝ ասեղնագործ ժանյակների նմանվող փրփուրով եզրագծված մանրիկ, կապտականաչ ալիքները:

Մեկը մյուսին արթնացնելով՝ երեխաներն անխոս ներքև իջան:

Կղզիացած բլրի վրա ծվարած գիշերօթիկի ստորոտում ծով էր՝ ծանրաշարժ ցեխաջրով լի ոռնացող մի ծով, որ երևի կուլ էր տվել անքունների արևն ու մուգ դարչնագույն փրփուր էր թքում ափերին:

Սարսափազդու տեսարանը բլրի վրա հավաքվածներին աղի արձանների նման գամել էր տեղում: Թվում էր՝ կենդանի էին մնացել միայն նրանց աչքերը, որ չռվել էին ակնաբներում և եթե կարողանային, դուրս կպրծնեին:

Միայն ինքը չէր վախենում:

Մարիամիկի ձեռքը բռնած՝ Հակոբը հանգիստ նայում էր ցեխաջրի այնքան ծանոթ հեղեղին, որ արդեն իր մեջ էր ամփոփել բոլոր նրանց, ովքեր ներքևում էին՝ լցվելով ընկղմվածների աչքերի ու ականջների մեջ:

- Չվախենաք,- գոռաց նա՝ շուրջը նայելով,- սա ընդամենը խլության ծովն է: Այն միշտ է այնտեղ եղել:

Իրեն չլսեցին...

Կայարան գրական ամսագիր

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՎԱՏԻՆ ՀԵՆՎԱԾ

Գոհարի որդի Հայկազը տռուզ թշեր, խոշոր ձեռքեր ու աննկատ չմնալու չափի գլուխ ուներ: Ոչ ոք չէր հիշում՝ մոր անխնա բամփելուց առաջ է՞լ էր նրա գլուխն այդքան մեծ, թե՞ աստիճանաբար աճեց: Ճիշտ է, Գոհարն ինքնատիրապետումից խեղճ էր, բայց գուցե մտածում էր՝ անհայր մեծացող տղան կոպիտ ձեռքից զուրկ չմնա:

Համադասարանցիները Հայկազին հաստատ «դդում» մականունն էին կպցնելու, եթե մինչ այդ մայրն իր կարճ խելքով ու երկար լեզվով նրան երկրորդ անգամ անվանակոչած չլիներ, և այս անգամ արդեն՝ վերջնականապես: Դանդալո՜շ՝ ճչում էր նա տանը թե դրսում՝ առանց կոկորդի զսպանակները ձգելու, տեղի-անտեղի որդու վրա զայրանալիս: Իսկ առնվազն շաբաթը մեկ նրանց փակ լուսամուտների մաշված փեղկերի արանքից ազատորեն դուրս էր լցվում Գոհարի գրեթե նույն բղավոցը՝ «Նորի՞ց, ա՛յ դանդալոշ, քեզ չասեցի՞ բուռդ պի՛նդ փակի:- Ձայնի մի պահ դադարը հուշում էր, որ բամփեց գլխին,- դե հիմա գնա կոպեկները գտի՛ ու առանց հացի տուն չգա՛ս»: Հայկազին էլ էդ էր պետք, որ սուրալով անցներ հարևան երեք տների կողքով, հասներ Սուսիկենց բակ ու այնքան սուլեր՝ հեռուստացույցով լսած ու սիրտը դող գցած մեղեդին, մինչև աղջիկը դանդաղաքայլ դուրս գար տնից ու աչքերը պսպղացնելով՝ վերցներ տղայի ափի տաքից դեռ չգոլացած ծամոնը:

Սուսիկն ի՞նչ իմանար, որ իր ընծաները մեկ հացի ու մի քանի հարվածի գին ունեին: Այնպե՞ս էր հրձվում դրանք ընդունելիս, որ այդ պահին ամեն ինչ թռչում էր մտքից, անգամ՝ իր մշտական արցունքների պատճառը:

Հայկազի իսկական անունը միայն ուսուցիչների շուրթերից էր հնչում: «Դանդալոշ»-ը կրճատվել, դարձել էր «Դանդ» և անօրեն, բայց փառավոր կերպով գրավել «Հայկազ»-ի օրինական պաշտոնը: Հետագայում գյուղ հարս եկած կանայք սկզբում զարմանում էին՝ այդ անսովոր անունը լսելիս, բայց ծագումնաբանությանը ծանոթանալուց հետո մի երկար «հաաա» էին բացականչում ու մեղավոր ժպտում, որ անմիջապես չեն կռահել:

Մի անգամ Սուսիկենց բակում սուլելիս դուռը բացեց նրա հայրը, որ գյուղի միակ դուդուկչին էր ու մեծ պահանջարկ ուներ մեռելատներում: Նա տղային տուն կանչեց, թշերին ճտճտացնելով ստուգեց դրանց ամրությունը, մի քանի անգամ՝ օդը ներս քաշել, հետո դանդաղ բերանից դուրս մղել տալով թոքերի ուժը փորձարկեց և մերժում բացառող վստահությամբ հարցրեց. «Դուդուկ կփչե՞ս, ա՛յ տղա»:

Սուլելը Դանդի համար ջուր խմելու պես սովորական բան էր: Սուլում էր թռչուններին ձայնակցելով, առանց թռչունների, օրվա բոլոր՝ կիսատ ու լի ժամերին, թե՛ պարապը մաշելիս, թե՛ հանգստի րոպե փափագելիս: Սուլում էր ինքն իր հետ խոսելու պես՝ տնավարի անվայելուչ, առանց սխալվելու վախի, անտեսելով մոր՝ «գլուխս տարա՞ր, դանդալո՛շ» ճղավոցը:

Միայն դասերի ժամին էր մտքում սուլում: Դպրոցի տնօրենը՝ մոր հեռավոր ազգականը, խղճով մարդ էր: Գոհարը երկու ճակատում էլ ապահով էր. հավաքարարի աշխատանքն ուներ, որդին էլ առանց խոսք ու կռվի փոխադրվում էր հաջորդ դասարան:

Տասնվեց տարեկան էր արդեն ու տասը ճվանի ծվածեղի հախից գալիս էր մի քանի րոպեում: Ճիշտ է, սովորելու հետ սեր չուներ, բայց խելոք, մաքրասիրտ տղա էր: Համագյուղացիները սիրում էին նրան: Գարնանը հողի հետ կռվելիս, կամ աշնան բերքահավաքի սուր օրերին հենց Դանդի ուժեղ ձեռքերի օգնությանն էին դիմում և իրենց բերք ու բարիքից առատորեն բաժին հանում նրան:

Սուսիկը Դանդից չորս տարով փոքր էր: Սուսիկ մի ասա, մի լույսիկ ասա: Ծուշան մաշկով ու ծիծառ աչքերով, սրճագույն մազերի երկար հյուսքերով այդ բարալիկ աղջիկը հրեշտակի էր նման: Նրա մայրը երկար էր սպասել զավակ ունենալու երջանկությանը, սակայն պտղավորման բերկրանքը մարել էր ծննդկանի իր ճիչերի հետ, երբ հայտնել էին, որ երեխան ծնվել է խեղված ճակատագրով: Դանդը փոքր ժամանակ լսել էր մեծերի խոսակցությունն աղջկա անբուժելի հիվանդության մասին, և տարակուսանքը հալածում էր նրան՝ «հիվանդ» բառի իր պատկերացրած իմաստի և Սուսիկի կատարյալ գեղեցկութ-

Կայարան գրական ամսագիր

յան հակասական մտքերից: Միայն, երբ աղջիկը բավականին ուշ իջավ մանկասայլակից, տղան տեսավ, որ նա բոլորից տարբերվող քայլվածք ունի, և իր համար շատ կարևոր մի բացահայտում արեց՝ հիվանդ՝ կարող է նշանակել նաև՝ ուրիշ: Սուսիկը պարզապես ճոճվելով էր քայլում՝ դեպի ներս թեքված ոտնաթաթերի վրա:

Երբ դպրոցում մի քանի լեզվանի իրենց մաշկի վրա զգացին Դանդի բռունցքների «գգվանքը», մյուսներն այլևս չէին համարձակվում Սուսիկի հասցեին ավելորդ մի բառ ասել:

Աղջիկը լավ էր սովորում ու պաշտում էր ընթերցանությունը: Հինգերորդ դասարանում «Իմ երազանքը» թեմայով շարադրության մեջ նա պատմել էր իր ամենամեծ բաղձանքի՝ ուղիղ ու գեղեցիկ քայլելու մասին, հետո՝ բժշկուհի դառնալու և բոլոր հիվանդներին անվճար բուժելու ցանկության մասին, իսկ Դանդի հետ նրանց տան կտուր բարձրանալու և թիթեղների տակ բնավորված ճնճղուկների ճագերին տեսնելու երազանքի մասին ամաչելով լռել էր: Ընկերոջից էլ էր թաքցրել: Բայց այնպե՜ս էր ուզում իր ձեռքով նորոգել նրանց բները, որպեսզի նորածին ճագուկները երբեմն վայր չընկնեին ու սատկեին, ինչպես պատմում էր Դանդը: Անհասկանալի էր, թե թռչել չսովորած, ինչո՞ւ էին շտապում «թռչել» բներից: Իր հարցին, թե ինչպիսի՞ն են նրանք, տղան պատասխանել էր՝ «Փետրած հավի պես, բայց շա՜տ փոքր»: Հետո նկարագրել էր՝ ինչպես է նրանց թաղում իրենց այգու ծայրամասում, փոքրիկ հողաթումբը ծածկում խոտով ու սուլում իր իմացած ամենատխուր մեղեդին: «Ուրիշ ոչ մեկը չգիտի սրա մասին, մենակ դու,- հավելել էր վերջում»: Աղջիկը դրանից իրեն կարևոր ու հատուկ էր զգացել, ձգվել էր ամբողջ մարմնով, ու թվացել էր՝ ա՛յ-ա՛յ, ոտքերն էլ կհրաժարվեն ծուռտիկությունից:

Արտաքուստ զարմանալի տարբեր, ներքուստ զարմանալի նման էին Սուսիկն ու Դանդը, և նույնն էին նրանց ծիծաղի ու լացի պատճառները: Այո, մի անգամ երկուսով լացեցին, երբ հարևան Արշակ պապին իրենց աչքի առաջ կտրում էր հսկա ընկուզենին: Ծեր ծառի հուժկու արմատները ճգվել հասել էին տան հիմքին ու գետնի տակից փորում էին հատակը: «Ա՛յ երեխեք ջան, ախր ի՞նչ անեմ, հո տունս չե՞մ տալու իրան, ես մնամ քուչեն,- արտասվախառն արդարանում էր ծերունին,- ախր ճար չունեմ, գիտեք ինձ հե՞շտ ա, պապական ծառ ա է՛...»: Այդ օրը երեխաները մի քանի տարով հասունացան ոչ թե նրա համար, որ զրկվեցին ծառից կախված ճոճանակի պարգևած կչկչոցից, այլ՝ որովհետև մի թաքուն անհաշտություն իր արմատները խրեց նրանց անմեղ մտքի փխրուն հողի մեջ...

-Ծիրան շատ ես սիրում չէ՞,- այս հարցով սկսեց դուդուկի առաջին դասը Սուսիկի հայր Սերոբը:

-Էն էլ ինչքան:

-Ծառի խեժից կերած կա՞ս:

-Էն էլ ինչքան:

-Ա՛յ տղա, դու ուրիշ բառ չգիտե՞ս:

-Էն էլ ինչքան:

-Լավ, քո խոսալը կարևոր չի, կարևորը քո լսելն ա:

Ու կլոր փորը հանդիսավոր կերպով տեղավորելով բազկաթոռի մեջ՝ Սերոբը սկսեց պատմել դուդուկի մասին իր իմացած բոլոր պատմությունները. թե դրանցից որն էր ինչ-որ տեղից լսած, որը՝ հորինած, արդեն ինքն էլ չէր տարբերում: Դանդը պետք է իմանար ամենակարևորը՝ դուդուկը պատրաստվում է ծիրանենու փայտից, որովհետև այդ ծառը համարյա մարդու չափ զգայուն է, ծերունու կնճիռների պես խոր ակոսներ ունի կեղևին, որի տակից խեժի տեսքով դուրս են ծորում ամոքում չգտած արցունքները: Ծիրանափողի հնչյուններով պետք է կարողանալ այնպես պատմել հայի ուրախ ու տխուր օրերի մասին, որ լսողի սիրտը մեկ ուրախությունից ցնծա, մեկ մղկտա ցավից: Դա է նվագողի ու գործիքի՝ նմանը չունեցող մերձեցման կախարդանքը:

Այդ ամենը տղան դյուրությամբ յուրացրեց, իսկ, այ, անհիծյալ նոտաները նրա համար մնացին օտար ու անհասանելի: Բարեբախտաբար, Սերոբը շուտ հասկացավ, որ Դանդի ու նոտաների միջև կռիվը երկար ձգվողներից է՝ առանց հաշտության հեռանկարի, ու ինքը փոխարինեց նոտաներին՝ բարձրաձայն երգելով նրանց նկարածը ու հիացած աշակերտի բացառիկ լսողությամբ:

Դանդը հորը չէր հիշում: Նրա թոթովախոս լեզուն դեռ չէր հասցրել ընտելանալ «պապա» բառի հարազատությանը, երբ հայրը կտրուկ հարստանալու անշեղ մտադրությամբ մեկնել էր Ռուսաստան աշխատելու: Հեռավոր Նովոսիբիրսկ քաղաքում մի միայնակ կին հենց նրան էր ճանաչել որպես իր աղոթքների՝ բարեգութ երկնքի կողմից ուղարկված պատասխան, ջերմեռանդորեն սիրել էր, թագադրել ու աստվածացրել: Իսկ այդպիսի փորձությունը տղամարդու համար դժվար հաղթահարելի է, ուժերից վեր դժվար... Ամուսնու՝ ռուս կնոջ ծոցում չափազանց հարմարավետ տեղավորվելու մասին լուրը Գոհարի ջահել սրտում այնպիսի երկրաշարժ էր արել, որ նրա շուրթերից շիկացած լավայի պես սկսել էին հոսել անեծքի փրփրուն գետեր: Անդադար անիծել էր ամենքին ու ամեն ինչ՝ սկսած իր երկար հյուսքերից, որոնց պատճառով ապագա սկեսուրն իրեն աչքի տակ էր առել, վերջացրած Եկատերինայի անառակ սերունդներով: Մի օր գյուղի խորդուբորդ ճանապարհին նրա առաջն էր կտրել «վախ բռնող» Փառո տատը և խորհրդավոր տոնով զգուշացրել. «Աղջիկ ջան, հերիք ա, քեզ չես խղճում, գոնե մինուճար էրեխուդ խղճա»:

Օրինվես դու, լուսահոգի Փառո տատ: Այդ օրվանից Գոհարի լեզուն սսկվել էր, այսինքն՝ միայն լեզվի անիծող կողմը, թե չէ ձայնի զլությամբ նրան զիջում էին անգամ գյուղի աքաղաղները:

Գոհարը դեռ չէր կողմնորոշվել՝ որդու դուդուկի պարապմունքներին ինչ աչքով նայի, բայց ամեն դասից հետո, այնուամենայնիվ, չէր զլանում մի հատ բշտել տղային, որ հողի գործերը թողած՝ փչելով է զբաղվում: Արդեն ձեռքը չէր հասնում գլխին, իսկ մկանուտ մարմնին հարվածելիս ավելի շատ իր ափն էր դաղվում: Միայն, երբ Սերոբը սկսեց Դանդին հետը տանել նվագելու և մի քիչ գումար դնել գրպանը, Գոհարը եզրակացրեց, որ դուդուկն ու դուդուկահարներն արժանի են հարգանքի: Նույնիսկ մի վառեկ մորթեց՝ ոչ ամենանվազը, ու գնաց Սերոբին շնորհակալություն հայտնելու: Բա ո՞նց, թող չմտածեն, թե Գոհարի խելքը էդ տեսակ բաներից չի կտրում:

Դանդը լավ էր մտապահել ուսուցչի ասածը, որ մեռած մարդը ամենաանվնաս մարդն է, նրանից վախենալու պատճառ բացարձակապես չկա, ու առանց լարվածության էր նվագում հուղարկավորությունների ժամանակ՝ չշեղվելով լացուկոծի՝ երբեմն նույնիսկ սրտապատառ ձայներից: Ախր այդ նույն ողբացողներին հետո տեսել էր լիաթոք ծիծաղելիս և հասկացել, որ մահն էլ կյանքի մի անխուսափելի «պարգև» է, որից անհնար է հրաժարվել՝ որքան էլ այն սրտովդ չլինի, ինչպես իր անճոռնի մեծ գլուխն ու Սուսիկի ծիծաղելի ծուռ ոտքերը:

«Ա՛յ կտեսնես, մի օր ես ուղիղ ու սիրուն կքայլեմ,- հաճախ էր զրույցի ժամանակ անափ հուզմունքով կրկնում Սուսիկը,- ու ծնողներս էլ չեն ամաչի ինձ հետ տեղ գնալուց... Ես մի քանի անգամ մամայիս բռնացրել եմ՝ ինձանից թաքուն լացելիս: Բայց հավատում եմ, որ մի օր մամաս կտեսնի իմ նորմալ քայլելն ու էդ օրը վերջին անգամ ուրախությունից կլացի»: «Ըհը, ես էլ եմ հավատում»,- պատասխանում էր Դանդն ու ուրիշ համոզիչ բառեր չէր գտնում իր հավատն ապացուցելու համար: Շատ-շատ այդ պահին մի ուրախ մեղեդի սուլեր: Բայց մտածում էր, շատ էր մտածում, թե ինչպե՞ս ցույց տա, որ իսկապես հավատում է:

Նրբիկ սիրունիկը տեղյակ չէր, որ ոչ Փառո տատն է իր մայրիկին հույս տվել՝ գլխին երեք անգամ «մոմ թափելուց» հետո, ոչ էլ Երևանի բժիշկը, որն, ամեն դեպքում, խորհուրդ էր տվել հատուկ մերսումներ ու վարժություններ անել: Սուսիկն արդեն վաղուց ինքնուրույն էր դրանք անում՝ առանց մայրիկի օգնության և շատ պարտաճանաչ կերպով: Երբ Դանդը որսում էր նրա՝ իրեն քաջածանոթ հարցական-աղերսող հայացքը, վստահ ձայնով ու հսկա գլխի հաստատող շարժումով ասում էր, որ քայլվածքի մեջ փոփոխություն է նկատում: Աղջկա հրեշտակային դեմքն անմիջապես ողողվում էր այնպիսի լու-

սափթիթ ժպիտով, որով միայն ընտրյալներն են ժպտում ընտրյալներին...

Դանդը կոշիկի փող էր հավաքում: Հագիններն այնպես էր չլել, որ լրիվ զրկել էր նախնական տեսքից ու համարյա հողաթափերի պես էր կրում: Թե ոտքեր ունենային՝ բազմիցս ջրափոսերում թրջված, ցեխակոլոլ եղած ու քթերն անխնա ջարդած այդ կոշիկները հիմա վաղուց էին տիրոջից փախել ու պահ մտել նկուղի մի մութ անկյունում: Ու չնայած Դանդին տեսնողը հայացքը նրա զռլամա գլխից վար չէր իջեցնում, բայց արդեն ամոթ էր այդ աստիճան քրքրված կոշիկներով ման գալը:

Ծրջկենտրոնի խանութի մեծ ու լուսավոր սրահում պատանին ինքնագոհ սուլելով շրջում էր գեղեցիկ դասավորված կոշիկների շարքերի միջով, երկար ու անթաքույց հաճույքով տնտղում ճռճռան, փայլուն ու անթերի գեղեցիկ նմուշները: Եղած գումարը դեռ չէր հերիքում:

Ջմրուխտ գարուն էր, որոտներից պայթող երկինքների, բացվելու անդիմադրելի տենչից պայթող բողբոջների, անձրևորդների խրախճանքից պայթող հողի, հուսավառ իղձերի ալեկոծումից պայթող սրտերի գարուն: Ճնճղուկները եռանդուն պտույտներ էին գործում օդում՝ շտապելով կեր հասցնել կտուցները լայն բացած, անկուշտ ճագերին:

Սուսաննան շատ վաղ էր տնից դուրս գալիս, որպեսզի իր շորորուն քայլվածքով ժամանակին հասներ դասի: Ճանապարհի ցեխի մեջ խրվելով՝ նա մի կերպ էր ոտքերն առաջ գցում՝ նայելով ծտերի աշխույժ եռուզեռին ու դառնությամբ հիշելով նախորդ օրվա անախորժ զրույցը Դանդի հետ: Նա երկու զոհ էր թաղել այդ գարուն: Աղջիկը տխրաձայն ասել էր, որ գիտի, իմացել է սիրտ կեղեքող ճշմարտությունը. ծտերը պատահաբար չեն ընկնում բներից, դրանք հիվանդ ճագերն են՝ թռչելու անընդունակ, որոնց խանգարող ներկայությունից բունն ազատում են ճարահատ ծնողները: Դանդն էլ էր գլխի ընկել՝ ինչն ինչոց է: Մի անգամ նա աստիճանի օգնությամբ հասել էր տանիքին ու ընկած ճտին, որը կենդանության նշաններ էր ցույց տվել, հարմար տեղավորել էր մյուս երկու ճագերի կողքին, բայց քիչ անց նրան նորից գետնին էր գտել:

Այդ նշանով էր դեռահասների առաջ բացվել բնության գլխավոր օրենքը՝ թույլերին վիճակված չէ հասնել կյանքի բերկրալի եզերքին, նրանք կեսճամփին շունչները փչում են դաժան մրցակցության ճիրաններում: «Բայց դու ահագին դուզ ես քայլում, Սուս,- ասել էր ընկերը՝ աղջկա ներաշխարհի փոթորիկը հանդարտեցնելու մղումով,- բան չի մնացել, որ լրիվ դզվես»: Սուսիկի թերահավատ ժպիտը տագնապի ազդանշան էր միացրել տղայի սրտում. ինքը պետք է ամեն գնով կանխի ընկերուհու հուսալքումը, ոգով կոտրվելը պարտության չարագուշակ սկիզբն է:

Ոչ դպրոց գնալու, ոչ տունդարձի ճանապարհին Սուսաննան չէր տեսել Դանդին և, ունկը՝ սուլոցին, հայացքով նրան էր որոնում, երբ հանկարծ նկատեց իրենց դռան առջև դրված տուփը: Նստեց քարե աստիճանին ու զգուշորեն բացեց այն:

Արևի մայրաբար գորովալից շողերի տակ պսպղում էին աղջկա հրճվագին աչքերը, նրա ձեռքի բարձրակրունկ, նրբագեղ կոշիկները և ծառի հետևից ծիկրակող պատանու հաղթական ժպիտը:

ԱՇԽԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՉՈՐՐՈՐԴ ՊԱՏԸ

Առավոտվա հոգնությունն անտանելի է: Բացում եմ ծանրացած կոպերս և առաջինը հանդիպում առաստաղից կախված ճոճվող ջահին: Արդեն հազար տարի է, որ ամեն առավոտ հանդիպում ենք իրար: Մենք գիտենք մեկմեկու բնավորության ամենամութ և լուսավոր կողմերը: Ես գիտեմ, թե նրա որ անկյունում է սարդը ոստայն հյուսել, բայց երկար տարիներ մտքովս անգամ չի անցնում մաքրել այն: Նա էլ գիտի իմ մութ անկյուններում հյուսված ոստայնների և նրանց մեջ սատկած ճանճերի մասին, բայց այլևս ոչինչ չի ասում. միայն դողում է դրսում ահագնացող քամու շնչից և վանկարկում իր հին ճռռոցը:

Երկրորդ առարկան, որին հանդիպում եմ, հեռախոսս է: Վաղուց արդեն ես նրան չեմ կարոտում, պարզապես անհոգաբար թույլ եմ տալիս, որ նա գողանա ինձնից ամենաթանկը: Հետո հետ եմ քաշում անթափանց վարագույրն ու նայում պատուհանից. դա առավոտյան արարողակարգի պարտադիր մասն է, չնայած երբեք էլ եղանակ չի փոխում ո՛չ զգեստապահարանում, ո՛չ էլ իմ ներսում: Հաջորդը հանդիպում եմ հողաթափերիս. նրանք խելոք սպասում են մահճակալիս մոտ: Եվ վերջապես տարտամորեն գնում նստում եմ ծեր, խորշոմած հայելու առաջ և անթարթ նայում. ոչինչ չի փոխվել: Ինքս ինձ նայելուց հոգնած՝ սկսում եմ հանդիպել իմ սենյակի մյուս բնակիչներին: Հայելուց աջ մի փոշոտ պահարան է դրված՝ վրան օծանելիքի դատարկ

սրվակ, հայելուց ձախ՝ նույն պահարանից, բայց դուռը՝ կոտրված: Կից պատի տակ մի սեղան է դրված: Սեղանի շուրջը մի քանի աթոռ կա, բայց միայն մեկի վրա է հնարավոր նստել, մյուսները վաղուց են գործածությունից դուրս եկել: Սեղանի վրա դեղին անթառամների մի փունջ է դրված: Կարևորն այն է, որ ծաղկամանը ջրով լցնելու և ջուրը փոխելու կարիք չի լինի: Սենյակի վերջին պատի վրա մի նեղլիկ դուռ կա, որի հակառակ կողմը երբևէ չեմ տեսել:

Իմ օրը նման է շրջապտույտի, որի մի օղակը բացակայում է: Երբ առաջին պատի տակ տեղակայված մահճակալից վեր եմ կենում, մոտենում եմ երկրորդ պատին գամված հայելուն ու պահարաններին, ապա տեղափոխվում եմ երրորդ պատի տակ դրված սեղանի մոտ, հետո բաց եմ թողնում չորրորդ պատը և նորից սկսում իմ շրջապտույտը: Թեև առաջին պատին եմ ապավինել, բայց քնելուց առաջ աչքի պոչով միշտ նայում եմ չորրորդին: Երբեք ոչինչ չի փոխվում, միայն սենյակն է աստիճանաբար նեղանում, դրանից ավելի է արագանում իմ շրջապտույտը, և, բնականաբար, ավելի հաճախ եմ հանդիպում չորրորդ պատին ու նեղլիկ դռանը: Մի անգամ փորձեցի ճեղքել չորրորդ պատը, բայց փոշոտ ու լայն պահարանս նեղ դռնով չանցավ, նույնիսկ վնասվեց: Փակեցի դուռը, ամուր մեխեցի ու անցա իմ մի փոքր վնասված առօրյային:

Երեկոյան քնելուց առաջ անփութորեն հայացքս սահեցրի մարմրող ջահի վրայով և աչքերս փակելով՝ մտովի հանդիպեցի նեղլիկ դռանը. առանց ափսոսանքի հրաժեշտ տվի մահճակալին, պատուհանին, ծեր հայելուն, պահարաններին, օծանելիքի դատարկ սրվակին, սեղանին՝ իր մեկ կանգուն և կոտրած աթոռների հետ, շնչեցի դեղին անթառամների հնաբույր փոշին, փոշտալով մոտեցա չորրորդ պատին, բացեցի մեխած դուռը և հողաթափերս հանելով՝ նեղլիկ դռնով դուրս եկա...

ՀՈՎԻԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ
(հատված վեպից)

Աստված դատում է ըստ գործերի:

Հավերժական ճամփորդը ճանապարհամերձ անտառները դիտելով և մտքերի հետ կռիվ տալով գնում էր: Աշունը տարբեր գույներով էր ներկել բնությունը: Տերևաթափ էր: Ծառերը մի աներևույթ ձեռքով ազատվում էին տերևներից, որ ձյան տեղալուց ճյուղակոտոր չլինեին: «Բնության մեջ սխալ բան չկա,- մտածում էր Հավերժական ճամփորդը,- ամեն ինչ գերճշտությամբ հաշվարկված է: Արարիչն ամեն ինչ ամենայն մանրամասնությամբ հաշվել է, գծագրել, նկարել, քանդակել: Ամեն ինչ ճիշտ է, ամեն ինչ կրում է հանճարեղ մտքի ու ձեռքի ազդեցությունը: Սակայն ինչո՞ւ է բույսի կամ ծաղկի մի սերմն ընկնում գետի ափի պարարտ հողի մեջ, մեկը՝ ջրից հեռու, մի մարդ ծնվում է թագավորական պալատում, մյուսը՝ մուրացկանի հյուղակում: Մեկն ապրում է անհոգ, վայելում պապերի թողած հարստությունը, մյուսը պարտավոր է ողջ կյանքում արյուն-քրտինք թափել... Մեկն ապրում է անապատում, որտեղ ո՛չ խմելու կարգին ջուր կա, ո՛չ բերքառատ դաշտեր, մյուսը՝ ծովի ափին, որտեղ այգիներն առանց խնամելու էլ հրաշալի բերք են տալիս... Եվ այդ ամենը կռվի պատճառ է դառնում: Մարդիկ միշտ աչքները ուրիշի տաք, փափուկ տեղի

վրա են պահում, առիթը բաց չեն թողնում խլելու այդ երկիրը, ափը, հարթավայրը, տունը, որն Աստծու կամքով, թե անբացատրելի ինչ-որ պատճառով ոչ թե իրենց է տրվել, այլ՝ հարևանին...

Ո՞րն է Աստծո արդարությունը: Ո՞ւր է...»:

Գնում էր ու ինքն իր մտքերի հետ կռիվ տալիս: «Ինչո՞ւ են այսքան կրոններ ստեղծվել և շարունակում են ստեղծվել, որոնց հետևորդներից յուրաքանչյուրն իր կրոնն է համարում ճշմարիտը, փրկության միակ ճանապարհը: Մի կրոնի ներկայացուցիչն սպանում է մյուսը դավանողին ու մեղքի զգացողություն ունենալու փոխարեն դրախտի ուղեգիր ստանում կրոնական առաջնորդի կողմից:

Ինչո՞ւ է Արարիչ Աստվածն ստեղծել Երկիրը, մարդկանց բնակեցրել ու թողել իրենց կամքին...»:

Երբ մտքերից սթափվելով նայեց հորիզոնին, տեսավ ծովը: Հեռվից զգում էր ծովի հոտը: Օդում ճախրող ճայերի ճչոցը կանչում էր: Արագացրեց քայլերը: Չնայած անմահ էր, բայց երբեմն այնքան էր հոգնում, որ ցանկանում էր պառկել ու այլևս չբարձրանալ:

Հաջորդ բլրի գագաթից ծովափնյա քաղաքը երևում էր: Խոնջացած մարմնին հանգստություն իջավ: Ծովափի երկարությամբ ձգվող քաղաքը կորած էր կանաչի ու աշնանային գույների մեջ: Ամեն ինչ ձուլված էր ծովափին ու աշնանը: Սակայն այդ միատարրությունն արտաքինից էր: Իրականում քաղաքը բաժանված էր երկու մասի: Քաղաքի մի կեսում վեր էին խոյանում եկեղեցիների գմբեթների շողշողացող ոսկյա խաչերը, մյուսում՝ մզկիթների ոսկյա կիսալուսինները:

Արդեն երեկոյանում էր: Մայր մտնող արևի ճառագայթներից ծովի կարմրադեղնավուն ներկված ալիքները միմյանց հետևից վազելով՝ խշշոցով փշրվում էին ափի սպիտակ ավազների վրա: Արդեն լսվում էին երեկոյան ազանի ելևէջները: Քաղաքի մի քանի մզկիթների մինարեթներից մոլլաները երգելով խոսում էին իրենց աստծու հետ: Ազանը բարձունքից ծորալով տարրալուծվում էր օդում, թափվում ծնկի իջած, ժամանակ առ ժամանակ ճակատը նամազի քարին զարկող մահմեդականների ծոծրակին, քաղաքի ու հորանջող ծովի ալիքների վրա: Քրիստոնյա տաճարներում ևս խոսում էին Արարչի հետ: Բայց եկեղեցական երչախմբի և քահանաների աղաչանք-պաղատանքի ու մեղայի ձայնը եկեղեցուց մի քանի մետր հեռավորությունից այն կողմ չէր անցնում:

Երկու հավատացյալ հոտերն էլ համոզված էին, որ իրենց ձայնն ավելի հաճելի է իրենց աստծու համար: Երբեմն էլ այդ կապակցությամբ փողոցային վեճեր էին ծագում հոտերի ոչխարների ու գայլերի միջև: Իսկ վերջին շրջանում միջադեպերը մի քնի անգամ արյունահեղության պատճառ էին դարձել:

Հավերժական ճամփորդը գիտեր, որ շուտով քաղաքում պատերազմ է սկսվելու: Այդպիսի պատերազմներ շատ էր տեսել: Իրենց հավատի ու աստծու անունով զինված բանակներ էին անցել ծովերից, անգամ օվկիանոսներից, հասել մի մայրցամաքից մյուսը՝ այլահավատներին ոչնչացնելու և տիրելու համար: Եվ միշտ շարքային զինվորները բյուր հազարներով զոհվել էին, իսկ առաջնորդները՝ կարողությունները բազմապատկել: Անգամ միևնույն աստծուն և միևնույն մարգարեին պաշտող հավատացյալները մի աննշան տարբերության պատճառով գետի նման արյուն էին հոսեցրել, խարույկների վրա ողջակիզել... Եվ այս բոլորը հանուն Աստծու: Բոլոր կրոնների առաջնորդներն այդպես են խաբում իրենց հոտերին, որպեսզի տիրեն նրանց ու քշեն այն ուղղությամբ, որը հարմար է իրենց: Իսկ երբ մնում են իրենք ու աստվածները, հանում են դիմակները, թավալվում զեխության մեջ, շնանում: Լիուլի օգտվում են հոտի համար արգելված երանելի պտուղներից: Իսկ աստվածները լռում են:

Եվ քանի որ Արարիչը Երկրի վրա ազատ կամք է տվել ճանապարհի ընտրության համար, չար ուժերը խաբում են մարդկանց, տարբեր կրոններ հնարում, միմյանց դեմ հանում: Եվ խաբված մարդկությունը, իր ստեղծման օրվանից մինչև աշխարհի վերջը, պիտի նույն Աստծու անունից մասնատված լինի ու ինքն իր դեմ կռվի... Դրա համար Հիսուսն աշակերտներին ասաց՝ երբ գամ աշխարհ, արդյոք որևէ իսկական հավատացյալ կգտնե՞մ...

Աշխարհի տիրակալն իր ծառայողների միջոցով անընդհատ խառնաշփոթ է ստեղծում: Մարդիկ ատում են միմյանց, խումբը խմբի վրա է ելնում, ազգը՝ ազգի, ժողովուրդը՝ ժողովրդի, հավատացյալը՝ հավատացյալի:

Հինգ աստղանի հյուրանոցի մեծ հեռուստացույցով վերջին լուրերն էին ցույց տալիս: Հեռուստացույցի մարդաբոյ էկրանից նոր ստեղծված Իսլամական խալիֆայության մարտիկները ողջ աշխարհին ցուցադրում էին իրենց թշնամիների մահապատիժը: Սունի մահմեդականները պատժում էին թշնամի շիա մահմեդականներին ու քրիստոնյաներին: Մոտ հարյուր մարդու՝ անչափահասից մինչև ծերունի՝ ծնկի իջած, սուր, կեռ դաշույնների՝ արևի տակ փայլող սայրերը դրել էին զոհերի կոկորդներին: Ծնկաչոք գերիները սրտատրոփ սպասում էին: Նրանց ապրելու ժամանակ էր տրված մինչև մսագործների ղեկավարի հրամանը: Ոմանք լռությամբ աղոթում էին, ոմանք՝ անիծում, ոմանք վախից դողալով արտասվում էին:

-Հանուն Ալլահի՜...- լսվեց հրամանը: Ծնկածները կոտրված ճյուղերի նման ցած թափվեցին: «Հանուն Ալլահի՜», դեռ օդում թռչկոտում էր մսագործների հրամանատարի ձայնը:

«Աստված Մեկն է: Սակայն մարդիկ տարբերություն են ստեղծել: Աշխար-

Կայարան գրական ամսագիր

հը կառավարողներն այդ տարբերությունը դրել են նրանց ուղեղում. այդպես տիրելը հեշտ է: Տարբեր կրոնների հոտերն ատում են միմյանց, և նրանց տերերն օգտագործում են այդ ատելությունը, որպեսզի չդադարեն հոտ լինելուց: Սունի մահմեդականները Մուհամմեդից բացի պաշտում են չորս խալիֆներին՝ Օմարին, Օսմանին, Աբուբաքրին ու Ալիին:Մահմեդականների շիա աղանդը չի ընդունում բոլոր խալիֆներին: Ընտրել է միայն Ալիին, որը Մուհամմեդի եղբոր տղան է և փեսան: Ալին համարվում է Մուհամմեդի իսկական տեղապահը, նրանից սերվածը: Բացի Ալիից շիաները պաշտում են տասներկու սրբերին, որոնցից վերջինը դեռ չկա: Նա կգա աշխարհի վերջին: Բոլոր կրոններն իրենց հոտերին հուսադրում են վերջին գալուստով: Եվ բոլոր հազարամյակների վերջին հավատացյալներն սպասում են այդ երջանիկ պահին, երբ վերջապես Երկրի վրա կհաստատվի արդարությունը, բայց Եկողը չի գալիս ու չի գալիս: Իսկ աշխարհի երևացող տիրակալները հազարամյակից հազարամյակ լկտիանում են, անհավատանում ու ավելի խեղդվում նյութի տիրապետության մեջ: Այնքան, որ երկրորդ հազարամյակի վերջին աշխարհի տիրակալները Հիսուսի գալուստը վերածեցին շահավետ գործարքի. վաճառեցին տարիներով պահեստներում կուտակված, արդեն թափելու ապրանքները: Քրիստոնյաները պաշտում են Հիսուս Փրկչին և սպասում նրա գալստյանը՝ աշխարհի վերջին: Ահա թշնամության պատճառը: Դեռ լավ է, որ Բուդդայի պաշտամունքն ընդունողները երկրագնդի մի ծայրը քաշված՝ ապրում են իրենց համար: Իսկ հրեական «աստվածը» խորամանկելով՝ աշխատում է բոլորին միմյանց դեմ հանել ու տիրել բոլորին...»:

Հավերժական ճամփորդին մտքերի ծովից դուրս հանեց հրամանատարի ձայնը. «Հանուն Ալլահի՜...»: Գլխներին պարկեր հագցրած զոհերը միմյանց հետևից գետնին թափվեցին. Մեկը կողքի վրա, մեկը քիթ-բերանի... Սպիտակ ավազները կարմրեցին:

Փոքրիկ աղջնակի սրտամաշ երգը վազում էր կանաչած արտի միջով, թռցնում թիթեռներին ու տարբեր աննկատելի արարածներին...

Մի խումբ պայթեցնում էր երջանիկ պատահականությամբ հազարամյակներից մինչև մեր օրերը հասած քրիստոնեական թե հեթանոսական տաճարը... Դրսում կրակոցներ լսվեցին: Այդպես էլի էր եղել և հետո դադարել էր, լռություն էր հաստատվել: Սակայն այս անգամ չէր դադարում: Սկսեցին կրակել քաղաքի տարբեր կողմերից: Հյուրանոցի սպասավորներն անհանգստացած սկսեցին վազեվազ անել:

-Սկսվեց,- ինքն իրեն ասաց Հավերժական ճամփորդը և մոտեցավ լուսամուտին: Հեռու և մոտիկ փողոցներում ձեռքի ռումբեր էին պայթում: Ծուխը բարուրում էր քաղաքը:

Լուսինը նման էր մորթված թռչունի: Մեկը մորթել ու շպրտել էր երկինք: Պատառոտված ամպերի ճեղքերից մեկ երևում, մեկ անհետանում էր: Չէր հասկացվում՝ ամպե՞րն են շարժվում, թե՞ լուսինն է մեկից հալածվելով վազ տալիս երկնքում...

Անսպասելի երկնքում երևաց մի հսկայական դեմք՝ ծամածռված, սարսափազդու: Ողջ երկնքով մեկ... Արևոտ բերանը բացած քրքջում էր: Այնպիսի տպավորություն էր, կարծես ուզում էր երկիրը կուլ տալ... Լեզվի փոխարեն հսկա, երեք գլխանի օձ էր դուրս գալիս: Եռաճյուղ լեզուները թրթռում էին երկնքում... Լիզում էին երկնքում վազ տվող լուսնին: Թվում էր, թե հիմա երկինքը կործկա, և օձի թույնը կթափվի ծխի մեջ կորչող քաղաքում վազվզող մարդկանց վրա:

Մուհամմեդի ուսմունքին հետևողները նախահարձակ էին եղել: Նրանք շատ վաղուց էին եկել հեռու-հեռավոր տափաստաններից ու անապատներից, հաստատվել այստեղ և այս ծովափն իրենցն էին համարում: Բայց նրանցից էլ առաջ՝ մարդու՝ Երկրի վրա բնակվելու օրվանից, այս դրախտային անկյունում բնավորվածները չէին համաձայնում այդ մտքի հետ, և պայքարը դարեր ու դարեր շարունակվում էր:

Մուհամմեդի ուսմունքին հետևողները որոշել էին վերջնականորեն լուծել խնդիրը: Մոլլաների խորհուրդը Ջիհադ էր հայտարարել: Այդ օրը, առավոտյան ազանից հետո, մոլլան կանչեց՝ «Հանուն Ալլահի», և զինված խմբերն առաջ շարժվեցին, անսպասելի գրոհով ներխուժեցին քրիստոնեական թաղամաս: Մինչ քրիստոնյաներն ուշքի կգային, մուսուլմաններն սկսեցին թալանն ու նախճիրը: Նրանց աստվածը հրեաների Եհովայի նման ասաց. «Սպանեք բոլորին՝ կանանց, ծերունիներին, օրորոցի երեխաներին: Այնպես արեք, որ աշխարհի երեսից ջնջվի նրանց հիշատակը»: Անմարդկային նախճիրը շարունակվում էր: Սպանում էին բոլորին՝ անմեղներին, մեղավորներին, անաստվածներին, Աստված կանչողներին, քնածներին, արթուններին, առողջներին, հիվանդներին, հազիվ ոտքի վրա կանգնողներին, հազիվ շնչողներին...

Խուճապ էր ընկել քրիստոնյաների թաղամասը: Թողնելով տուն ու տեղ, հիվանդ ու ծեր հարազատներին՝ փախչում էին: Յուրաքանչյուրն առաջնորդվում էր իր Աստծո խորհուրդներով: Քրիստոնյաների Աստվածն ասում էր. «Իսկ ես ձեզ ասում եմ՝ սիրեք ձեր թշնամիներին, օրհնեք ձեզ անիծողներին, բարություն արեք ատողներին և աղոթեք նրանց համար, ովքեր չարչարում են ձեզ: Այդպիսով դուք ձեր Հոր որդիները պիտի դառնաք...»:

Թշնամին չգիտեր այդ մասին: Նրա աստվածն այլ բան էր ասում՝ դրա հակառակը: Նրանք էլ կատարում էին իրենց աստծու խորհուրդները:

Մուհամմեդի հավատքին հետևողներն արդեն բավականին խորացել էին

Կայարան գրական ամսագիր

քրիստոնեական թաղամասում, երբ նրանց դեմ ելան հակառակորդի զինված խմբերը: Նրանք վերջապես հասկացել էին, որ իրենց չարչարողների համար աղոթելով՝ ոչնչանալու են, քանզի հակառակորդը չի լսում իրենց աղոթքը և ետ չի կանգնելու նպատակից:

Սկսված կռիվը տևեց մի քանի շաբաթ: Քրիստոնյաները կռվում էին և հուսով էին, թե աշխարհի ուժեղները կմիջամտեն, կփրկեն, բայց միայն խոսքեր էին խոսվում: Հեռուստատեսությամբ շոուներ էին կազմակերպում, երբեմն էլ մարդասիրական օգնություն հասցնում՝ և՛ իրենց, և՛ իրենց թշնամիներին, որոնք օրը ցերեկով պատերազմ սկսեցին, թալանեցին քրիստոնյաների ունեցվածքը ու երբեք իրենց մեղքը չեն ընդունելու:

Պատերազմը շարունակվում էր: Ո՛չ մահմեդականներն էին դադարեցնում հարձակումը, ո՛չ էլ քրիստոնյաներն էին հանձնվում: Մեծ տերությունները մարդասիրական օգնության անվան տակ արդեն զենք ու զինամթերք էին մատակարարում հակամարտող կողմերին: Աշխարհը բաժանվել էր երկու մասի, յուրաքանչյուր կողմը մեղադրում էր մյուսին, հակառակորդին անվանում անաստված ու հրձիգ:

Ծովափնյա դրախտավայր քաղաքն արդեն ավերակույտի էր վերածվել: Մարդիկ զրկվել էին օթևաններից, քնում էին փողոցներում, բաց երկնքի տակ, պատահականորեն անվնաս մնացած նկուղներում: Հացը թանկացել էր, երեխաները քաղցից կմախքացել էին: Մեծ տերությունները գիտաժողովներ էին կազմակերպում...

Այդպիսին էր իրավիճակը, երբ բնությունը հանկարծ բորբոքվեց: Անսպասելի, միանգամից փոթորիկ բարձրացավ: Թունավոր թարախապալարը պայթել էր: Հեռուստալուրերը հաղորդում էին. «Ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել: Էպիկենտրոնը գտնվում է քաղաքից մի քանի կիլոմետր հեռավորության վրա...»:

Երկրաշարժն սկսվել էր գիշերով, երբ շուրջօրյա կռիվներից հոգնած կողմերը խոր քնի մեջ էին ընկղմված: Ուժեղ երկրաշարժից առաջացած փոթորիկն ու ալեկոծությունը պատերազմից սոսկալի էին. կատաղած ծովը հարձակվեց հոգնած, ավերակույտի վերածված քաղաքի վրա: Շենքերի բարձրության հասնող ալիքներն իրենց ճանապարհին լվանում, սրբում, կուլ էին տալիս ամեն ինչ: Հոգնած, զզված երկինքը որոշել էր մաքրել մարդկային հոգու աղբը: Աստված սովորականի նման աչքը բացեց, կկոցած նայեց մարդկանց երկրին, ապա ծովափնյա քաղաքին: Տեսարանը սարսափելի էր: Կանաչի ծովում թաղված քաղաքի հետքն էլ չէր մնացել: Մարդկային դիակները գույնզգույն լաթի ծվենների նման, կառչած ճյուղակոտոր ծառերից, ավերված շինությունների երկաթյա մատներից, երկաթբետոնե կմախքներից,

օրորվում էին լափին տվող կեղտակուր ջրերի վրա: Արհավիրքի դեմ պայքարող հատ ու կենտ անզոր մարդիկ տաշեղների նման քշվում էին, խառնվում փողոցները ողողած անպետքության հետ: Դադարել էին սարսափից խելագարվող մարդկանց ճիչերն ու օգնության կանչերը, որովհետև արդեն օգնության հույսը մարել էր: Ողջ մնացած մարդիկ մոռացել էին կռվի, կրոնի ու հավատի մասին: Յուրաքանչյուրը ձգտում էր կառչել մի ծառից, քարից, ավերակ շենքի փլվող պատից... Կառչել ու փրկվել... Մահմեդական ու քրիստոնյա միասին հունցվում էին խմորի միևնույն տաշտում: «...Որովհետև Նա արեգակը ծագեցնում է թե՛ չարերի և թե՛ բարիների վրա, և անձրև է տեղացնում թե՛ արդարների և թե՛ մեղավորների վրա...»:

...Փոթորիկն ու ալեկոծությունը հանդարտվել էին, բայց քաղաքի ավերակները դեռ ջրի տակ էին: Հրաշքով փրկված մի մահմեդական լողալով գնում էր դեռևս կանգուն մնացած շենքի ավերակները: Երեխայի լաց լսեց: Քիչ հեռվում, ծառի ճյուղից կառչած, օգնություն էր կանչում: Որոշեց չլսելու տալ, անցնել, բայց ներսում ինչ-որ անհասկանալի ճնշում զգաց: Կամքից անկախ ուղղվեց այնտեղ: Մանչուկի հագուստը հագել էր ծառի կոտրված ճյուղին և նրան պահում էր ջրի վրա:

-Փա՛ռք Ալլահին,-շշնջաց մահմեդականը,- հրաշք է տեղի ունեցել:

Տղա երեխային ազատեց ծառի ճյուղից, գրկեց: Երեխան վախից ու ցրտից դողում էր, փաթաթվեց մահմեդականին: Տղա երեխայի հագուստն ամբողջովին ճղված էր՝ տեսավ, որ թլփատված չէ: Մտածեց թողնել, հեռու լողալ, բայց չկարողացավ: Մտածեց՝ Ալլահը փրկել է իրեն և փորձության մեջ գցել: Տղային դրեց մեջքին ու լողաց առաջ:

Կիսավեր շենքից հետո բլուրներ էին սկսվում, ջուրը սաղր էր: Վերջապես կանգնեց ոտքերի վրա, երեխային բարձրացրեց, դրեց ուսերին ու առաջ շարժվեց:

Աղետից հրաշքով փրկվածները հավաքվել էին Ծովափնյա քաղաքի վերևի անտառոտ բլուրներին: Այնտեղ ապահով էր և տաք: Բոցկլտացող խարույկների շուրջը հավաքված՝ տաքանում էին, չորացնում թրջված հագուստն ու կոշիկները: Մուհամմեդի հավատքին հետևող մուսուլմանը, երեխային ուսերին դրած, վերև բարձրացավ, բայց վախենում էր մոտենալ տեղ-տեղ հավաքված մարդկանց խմբերին, չգիտեր՝ քրիստոնյա՞ են, թե՞ մահմեդական: Շուտով նրան նկատեցին և մոտ կանչեցին: Ապա երկու հոգի առաջ եկան, թրջված, կիսաուշագնաց երեխային վերցրին ուսերից:

Խարույկի մոտ հաճելի տաք էր: Երեխային մոտեցրին կրակին, իրեն էլ տեղ տվեցին: Մեկը պայուսակից մի կտոր հաց հանեց, մյուսը՝ չորացած երշիկ: Երեխան ուշքի էր գալիս:

Կայարան գրական ամսագիր

-Էլի մարդիկ կայի՞ն...,- հարցրեց մի ձայն,- հարազատներիս բոլորին կորցրի...:- Գիտեր, ինչ պատասխան է ստանալու, բայց հարցնում էր:

Մահից նոր փրկված մահմեդականը ոչ մի պատասխան չտվեց, ագահությամբ ուտում էր հացն ու երշիկը: Ի՞նչ պատասխաներ, առանց այդ էլ ամեն ինչ պարզ էր: Մտածում էր, որ մի քրիստոնյայի է փրկել: Եվ եթե այս մարդիկ իր հավատակիցները լինեին ու իմանային այդ մասին, իրեն կգլխատեին...

Բայց շուտով գլխի ընկավ, որ այդ մասին մտածող անգամ չկա: Ընդհանուր խարույկի մոտ տաքացողները. և՛ մահմեդականներ են, և՛ քրիստոնյաներ, և՛ բուդայականներ ու մովսեսականներ... Բոլորին հիմա մի բան էր մտահոգում՝ ապրել, փնտրել կորած հարազատներին: Հոգնել էր: Անքնությունից աչքերը փակվում էին: Կուշտ ուտելուց հետո ցանկացավ քնել:

-Արի էստեղ,- ուսից բռնեց մեկը:- Չէր ճանաչում, չգիտեր՝ ով էր՝ քրիստոնյա՞, թե՞ մահմեդական, բայց հնազանդվեց: Ծառի ճյուղերից ու ստվարաթղթից պատրաստված անկողինը տաք էր ու փափուկ: Մտածեց, որ Ալլահի դրախտը հենց սա է, որ կա...

Տղա երեխան վազեվազ մոտեցավ, մտավ ծոցը, շան քոթոթի նման փաթաթվեց, կծկվեց ու փակեց աչքերը: Մահմեդականը գրկեց նրան: Այնքա՜ն անուշ էր այդ քունը... Ինքը հրաշքով փրկվել էր: Փրկել էր մի երեխայի: Հերն էլ անիծած՝ մահմեդակա՞ն էր, թե՞ քրիստոնյա... Մարդ էր: Աստծո արարած...

Երեխան, տաքանալով գրկի մեջ, անմիջապես քնեց: Նրա ֆսֆսոցը խաղաղության ու ապահովության երջանիկ զգացողություն էր ծնում: Ինքն էլ փակեց աչքերը, և նրա հոգնած մարմինն ընկղմվեց խոր ու խաղաղ քնի մեջ:

Հեռուստաէկրաններին ողջ աշխարհով մեկ մահմեդականի ու քրիստոնյա տղա երեխայի կադրերն էին ցուցադրում: Ինչ-որ մեկը նկարահանել էր, երբ ուսերին դրած դուրս էր գալիս ջրից: Հետո, միմյանց գրկած, խաղաղ ննջում էին:

Ապա երևում էր Հավերժական ճամփորդը.

-Աստված դատում է ոչ թե ըստ ազգության, հավատի կամ մաշկի գույնի, այլ՝ ըստ գործերի... «որովհետեւ Նա իր արեւը ծագեցնում է եւ՛ չարերի, եւ՛ բարիների վրա եւ անձրեւ է ուղարկում թե՛ արդարների եւ թե՛ մեղավորների վրա»: Բնության տարերքն իր արհավիրքը տարածում է բոլոր անհատների, բոլոր խմբերի ու ազգերի վրա հավասարապես: Արեգակն իր լույսը տարածում է բոլոր արարածների վրա հավասարապես՝ չար լինեն, թե բարի: Արևի համար գոյություն չունի չար կամ բարի: Չարը կամ բարին իրենք պետք է օգտվեն կամ պաշտպանվեն բնության տարերքից կամ արևի ճառագայթներից:

Առաջնայինը ոչ թե գաղափարախոսությունը կամ կրոնն է, այլ ամենօրյա տքնաջան աշխատանքը, գործադրված ջանքը: Մարդը և ազգերն իրենք պետք է գիտակցեն զենք վերցնելու կամ հող մշակելու, Արարչի առաջ ծնրադրելու և աղոթելու ճիշտ ժամանակը...

ԷՏՅԵՆ ՎԵՌՀԱՍԵԼՏ

Ընթերցասեր մարդու համար բացառիկ հաճույք է լիովին անսպասելի հայտնագործել մի նոր անուն, վայելել գրության կատարելապես մի նոր տեսակ, հերթական անգամ հիանալ ստեղծագործող երևակայության անսահման հնարավորություններով, ապշել, թե ինչպես ստեղծելով բացարձակ նորը, անկրկնելին, կարելի է հաստատուն կամուրջ գցել դասականության հավերժական ավանդների հետ...

Այս եզակի պահերն ապրեցի ես՝ կարդալով բրյուսելցի նշանավոր հոգեբան, 1965 թ. ծնված Էտյեն ՎԵՌՀԱՍԵԼՏԻ անտիպները: Այո, անտիպները, ոչ թե գիրքը, որը բնավ չի շտապում լույս ընծայել, և շատ իզուր, քանի որ այդ գիրքն, անկասկած, երևույթ կդառնար ոչ միայն բելգիական, այլև ընդհանրապես եվրոպական գրականության համար: Եվ մինչև նրա կարճ պատմվածքները լույս կտեսնեն հեղինակի հայրենիքում, ռումինացիք 2016 թ. թարգմանեցին և լույս ընծայեցին նրա ժողովածուն: Եզակի դեպքերից մեկը, երբ գրողն իր երկրում ընդունվելուց առաջ արդեն ճանաչում է գտնում օտարների մոտ: Նա միջոցներ ու լայն կապեր ունի, որպեսզի ոչ միայն տպագրի իր գրքերը, այլև արժանանա քննադատների բարձր գնահատության, գուցեև պատվավոր մրցանակների, սակայն լուռումունջ շարունակում է գրել՝ առանց սնափառական մղումների, որ հատուկ է գրամոլներին:

Ալեքսանդր Թոփչյան

ԿԱՐՃ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ[1]

«Միշտ ցանկանում ենք ստեղծել մի գործ, որը կզարմացնի մեզ»:

Չեզարե ՊԱՎԵԶԵ

ԱՆՍՈՎՈՐ ՀՅՈՒՐԸ[2]

Փոքրիկ, թռչող հյուրը, աշնան առաջին ցրտերից նեղված, ապաստան գտավ ինձ մոտ: Ես առավոտյան տեսա, թե ինչպես էր անհոգ դեգերում: Խոհանոցից դուրս եկավ և վերընթաց կորագծով թռիչք գործեց դեպի ճաշասրահի ձեղնաջահը: Դա մի մեծ մոծակ էր՝ նրբին, ծղոտանման իրանով, երկու թևով և վեց բարակ ոտքերով՝ երկար, ինչպես անթացուպերը: Կատարելապես անվտանգ, ծանրաշարժ միջատ, որին կնքել են ծաղրական §լողուկ¦ բառով: Մոծակն, անկասկած, տանտիրոջ պես, շրջայց էր կատարում բնակարանի մեջ: Օրվա ընթացքում տարբեր անկյուններում տեսա՝ փնտրտուքով զբաղված: Առանձնապես ուշադրություն չէի դարձնում նրան: Մյուս բոլորի պես ինձ համար սովորական էր այս փոքրիկ այցելուն: Հաջորդ օրը, անհանգիստ ու անդադար բզզոցից գրգռված, ես նրան գտա հյուրասրահի վարագույրների ետևում բանտարկված: Ասես մի սատանա, դեսուդեն էր ընկել՝ անկարող ելք գտնելու: Ես նրան ազատեցի: Մոծակն անմիջապես դուրս պրծավ, սուրաց դեպի նախամուտք, և օրվա ընթացքում նրան այլևս չտեսա: Բայց երեկոյան, զգեստապահարանից եկող խուլ և համառ մի բզզոց ինձ հանեց անկողնուց: Դարձյալ նա էր: Այս անգամ, և Աստված գիտի, թե ինչպես, նա փակվել էր իմ կոստյումների մեջ: Պահարանի դուռը բացելուն պես նա սլացավ դեպի առաստաղը և այդտեղ էլ մնաց անշարժ: Մի պահ ինձ թվաց, թե մոծակն այդտեղից զննում է ինձ, որ ես հետաքրքրում եմ նրան, ես, որ օրվա ընթացքում երկու անգամ փրկեցի նրան պատուհասից:

Հաջորդ օրը, երբ նախաճաշում էի խոհանոցում, եկավ տեղավորվեց սեղանին՝ առջևս: Համաձայն իմ խոնարհ դիտարկումների, մոծակների թռիչքն անկանոն է, դեսուդեն ընկնելով, և նրանք նստում են՝ ուր որ պատահի: Բայց երբ այս մեկը վայրէջք կատարեց ճիշտ իմ առջև, սեղանին, նա նման չէր

[1] ©Etienne VERHASSELT – Choix de nouvelles courtes

[2] *Un hôte hors du commun.*

անպտուղ թափառումներից հետո հանգստանալ ցանկացող միջատի: Զարմացած զննում էի նրան և տեսնում մի շիտակ և վճռական, բայց բնավ ոչ կատաղի կերպարանք: Ինձ թվաց, թե գլխում մի գաղափար ունի և որ նույնիսկ մի նշանի է սպասում իմ կողմից: Ավելի քան մեկ րոպե անշարժ նայում էինք իրար: Մինչ իր մանրիկ աչքերով դիմանում էր իմ հայացքին, պիտի նկատած լիներ, որ ես նրան պատահական գազանիկի տեղ չեմ դնում, քանի որ սկսեց տարօրինակ կերպով ցատկոտել տեղում:

Բազմազանելով թևերի թրթռացումը, կարճատև ու կանոնավոր ընդհատումներով տեղից պոկվում էր, մի քիչ վեր բարձրանում, նորից իջնում, և այսպես շարունակ: Ես ապշած էի. միթե միջատն ուզում էր հաղորդակցվել ինձ հետ: Իմ կրավորական կեցվածքին դեմ հանդիման, նա չէր ընկրկում: Այդ ժամանակ ձեռքս մեկնեցի և մեծագույն զարմանքով տեսա, թե ինչպես շնորհագեղությամբ տեղավորվեց իմ ցուցամատին: Այդ պահից սկսած՝ մոծակն այլևս ինձ չլքեց իմ բնակարանում, և ճիշտն ասած, մենք դարձանք աշխարհի լավագույն բարեկամները: Երբ բացակայում էի կամ աշխատում իմ սենյակում, նա մոտակայքում զբոսնում էր՝ դեսուդեն թռչելով: Նրա տզզոցն իմ հարևանությամբ արդեն սովորական էր դարձել, և օդային այդ հանդեսի մեջ թեթևացնող մի հատկություն էի տեսնում: Մեր ընդհանուր հետաքրքրություններից մեկն էր ընթերցանությունը, քանի որ ես իսկույն նկատեցի, որ մոծակը կարդալ գիտի: Մենք ժամեր էինք անցկացնում հյուրասրահում կամ անկողնում՝ Դինո Բուցատիի պատմվածքներով հրապուրված: Քանի՜ անգամ ընթերցեցինք և վերընթերցեցինք «Ապշեցնող կենդանին» կամ «Թիթեռը», մի գուշակություն, որն անկարող էինք վերծանել: Մենք ծիծաղում էինք միասին, միասին հուզվում: Նա թառում էր բազմոցի մեջքին կամ բարձին, որպեսզի կարողանար իմ ուսի վրայից տեսնել, և նրա թևերի թեթևակի շրշյունն ազդարարում էր, որ կարող եմ էջը շրջել: Մենք սիրում էինք նաև երաժշտություն լսել: Ես զարմացած էի՝ հայտնագործելով, որ մոծակները պարել գիտեն և որ ռիթմի սուր զգացողություն ունեն: Երբ տանգո էի միացնում, հիանում էի խստականոն, միաժամանակ թեթև պարարվեստով, որ նրա փոքրիկ ու փխրուն մարմինն էր ծավալում իմ գլխավերևում: Հիշում եմ, թե հուզմունքից ինչպես արտասվեցի այն օրը, երբ Ռավելի Սոլ մաժոր կոնցերտից իրեն պարզապես կորցրեց: Մարթա Արգերիխի վիրտուոզ կատարմամբ կախարդված՝ նա թռչում և շրջաններ էր գործում նրբագեղորեն ու ոգեշնչված: Երաժշտությամբ տարված՝ նա ի վիճակի էր ամենաբարդ հույզերն արտահայտել, և ես չեմ վարանի՝ ծիծաղելի երևալու հավանականությամբ ասել, որ նա ինձ համար բացահայտեց որոշ ստեղծագործությունների հարստությունը, որոնք կարծում էի, թե լավ գիտեմ: Բայց

մոծակը նաև ավելի պարզ ճաշակներ ուներ և չէր խորշում երաժշտական մյուս ոճերից: Օրինակ՝ քանտրին բարձրացնում էր նրա տրամադրությունը, և չարաճճի երեխայի պես նմանակում էր ռոդեոյի ձիերին, որ կապերը կտրած դեսուդեն էին վազում, ասես շարունակ անակնկալների տուփից դուրս ցատկեին կատաղած: Բանաստեղծները գրավում էին նրա ուշադրությունը, և իմ արտասանած բանաստեղծություններից հետո տպավորված՝ մենք կարող էինք րոպեներ շարունակ լուռ մնալ: Արգենտինացի բանաստեղծուհի Ալֆոնսինա Ստորնիի արձակը, որ թարգմանեցի ես, մտածմունքների մեջ գցեց նրան ժամեր շարունակ. «Միջատների պես արեցի: Ես քո գույնը վերցրի, և հենց նույն պահից ես ապրում եմ քո պատյանի վրա՝ աներևույթ, անշարժ՝ վախենալով, թե կճանաչվեմ»: Մենք երկուսս էլ չգիտեինք, որ դա կանխատեսող ընթերցանություն է, մեր գեղեցիկ բարեկամությունը շուտով պիտի ողբերգական ավարտ ունենար:

Մի քանի օր անց, հինավուրց գործընկերներիցս մեկը կնոջ հետ եկավ մոտս ընթրելու: Հաճելի երեկո անցկացրինք, և երբ բաժանվում էինք, ես ուրախ էի այն գաղափարից, որ պիտի գնամ պառկեմ և իմ թևավոր փոքրիկ բարեկամի հետ Բուցատիի «Մոգական գազանանոց»-ը կլանեմ: Բայց նրան անկարելի էր գտնել: Ես զարմացած էի, քանի որ երբեք նման բան չէր պատահել: «Դեհ, - մտածեցի ես, - նա էլ մյուսների պես մի քիչ առանձնանալու իրավունք ունի»: Ես կարդացի պատմվածքը և իսկույն քնեցի: Հաջորդ օրն առավոտյան արթնանալուն պես, գիշերասեղանին նայեցի, որտեղ սովորաբար քնում էր մոծակը: Այնտեղ ոչ ոք չկար: Սկսեցի անհանգստանալ: Մի քանի անգամ սենյակներով անցա, բայց՝ ապարդյուն: Ես զննում էի յուրաքանչյուր սենյակը, անգամ ամենահետին անկյունները, բայց նրան չէի գտնում: Այդ ժամանակ բոլոր ձեղունները բացեցի, բոլոր պահարանները նայեցի, բոլոր դարակները խուզարկեցի, բոլոր վարագույրները և պաստառները զննեցի... հետազոտում էի հատակի յուրաքանչյուր քառակուսի սանտիմետրը, կարճ ասած, ամբողջ օրը նվիրեցի բնակարանը սանրելուն, բայց նրա հետքը ոչ մի տեղ չկար: Գուցե վիրավորվել է, որ այդ զույգին հրավիրել եմ և երեկոն անցկացրել առանց իրեն: Դա ինձ անհավանական թվաց, ոչ հատուկ նրա ազնիվ զգայունակությանը: Ոչ, սա հաստատ նորմալ բան չէր: Ես դեգերում էի բնակարանում՝ ասես մի տառապյալ հոգի, և ինձ համակում էր անորոշության զգացումին խառնված ընդվզումը: «Ինչ-որ բան է պատահել նրան»,- շարունակ կրկնում էի ես՝ չափազանց անհանգիստ: Արդեն որերորդ անգամ նախամուտքով անցնելիս զգեստակախարանի մոտ մի մուգ բիծ նկատեցի, որ վրիպել էր իմ ուշադրությունից: Սիրտս դադարեց բաբախել, և ես մոտեցա. նա էր, մոծակը, իմ պստիկ ընկերը, այդտեղ

ճզմված, պատի վրա: Ես անմիջապես պատկերացրի, թե ինչ է տեղի ունեցել. նախորդ օրը, երեկոյան, իմ գործընկերը կամ նրա կինը, նրբին միջատին նկատելով, մեքենայաբար ճզմել է նրան՝ ենթարկվելով տիպականորեն մարդկային հիմար և դաժան ռեֆլեքսին: Ինձ համար դա զազրելի ոճիր էր, և ես մի թանկագին արարած կորցրի: Ես արտասվալից ծնկի իջա նրա թշվառ մնացորդի առջև:

Այդ օրվանից ի վեր այլևս չեմ խոսում գործընկերոջս հետ, և նա չի հասկանում, թե ինչու: Ինչպե՞ս բացատրեմ նրան, նրան կամ մեկ ուրիշին, որ այդ մոծակն իմ բարեկամն էր:

Որ ես սիրում էի նրան:

ՓՈՂՈՑԻ ԾԱՅՐԸ[1]

Իսկապես զուտ բնական, բայց իմ ճանաչողության համար եզակի մի զարմանահրաշ երևույթով, որը, սակայն, առ այսօր ոչ մեկին չի հետաքրքրել, իմ բնակված փողոցի ծայրն անհնշմարելի է, չնայած թաղի տարածքը կատարելապես հարթ է, փողոցի երկարությունն էլ հարյուր մետրից ավելին չէ: Եթե որևէ մեկը կանգնի փողոցի սկզբում, ծայրը չի տեսնի. ասես գնում կորչում է հորիզոնից անդին, ինչի համար անվանում են «աշխարհի ծայր»: Իրերի այս առանձնահատուկ կացությունն անհետևանք չի մնում (մենք դա կտեսնենք) նրանց համար, ովքեր, ինչպես ես, ապրում են այդ փողոցում:

Նախևառաջ հայտնենք, որ եղանակներն այդտեղ շրջված են: Ձմռանը, որ միշտ չափազանց դաժան է, դուրս ենք գալիս ոտքից գլուխ մորթիներով ծածկված, սակայն հետներս թեթև շորեր ենք տանում, քանի որ քաղաքում ամառ է: Ամռանն էլ ճիշտ հակառակն է: Իմիջիայլոց, ասենք, որ բարեբախտաբար, ժամերի ոչ մի տարբերություն չկա փողոցի ծայրի և քաղաքի մնացած մասի միջև: Ֆլորան և ֆաունան դարձյալ նույնն են: Միակ բանը, որ աչքի է զարնում, եղանակների տարբերությունն է:

Բայց պետք է պատկերացնել, թե ինչ է նշանակում ամեն առավոտ գալ աշխատանքի և լսել, թե գործընկերներդ ինչպես են դիմում քեզ՝ որպես մեկին, որ գալիս է մեկ այլ մայրցամաքից, և նախորդ օրերի պես ասում են. «Երևում է՝ լավ ես, հա՞: Դե, ասա տեսնենք, բախտավոր մարդ, ինչպե՞ս էր: Լավ ճամփորդեցի՞ր: Հուսամ ահագին լուսանկարներ ես բերել, կպատմես, չէ՞»: Ինձ որոշ ժամանակ պետք եղավ ընտելանալու այդ վիճակին, և մի որոշ

1 Le bout de la rue.

Կայարան գրական ամսագիր

ժամանակ ապարդյուն փորձում էի բացատրել, որ ես ոչ մի տեղ չեմ գնացել և չեմ ժամանել երկու թե երեք շաբաթ տևած արձակուրդից հետո: Չէ՞ որ նրանց համար ամեն առավոտ ես գալիս էի աշխարհի մյուս ծայրից:

Ոմանք էլ կարող էին այլ կերպ խոսել, ոչ թե՞, որ վերադառնում էի հեռավոր վայրերում անցկացրած արձակուրդից, այլ որ, ոչ ավել ոչ պակաս, տարիներ շարունակ ընտանյոք վտարանդի ենք դարձել: Սրանք, սովորաբար, չեն բավարարվում մի քանի ձևական հարցեր տալով, որոնք ես արդեն թվարկեցի, այլ շատ հաճախ իրենց տուն ճաշի են հրավիրում ձեզ, ձեր տիկնոջը և ձեր երեխաներին, որոնք կարող են խաղալ նրանց երեխաների հետ, նրանց համար այնպիսի՜ հաճույք կլինի նորից տեսնել այդ սիրելի փոքրիկներին: Մարդիկ ուզում են ամեն ինչ իմանալ երկրագնդի մյուս ծայրը գաղթելու արտառոց փորձառության մասին: Սրանք ամենահամառն են, և ձեր օձիքը բաց չեն թողնի, մինչև որ մի կես ժամ մանրամասնորեն չհարցաքննեն ձեզ: Եթե, դժբախտաբար, մի քիչ մտերիմ եք նրանց հետ, ձեզ նաև տեղեկություններ կհրամցնեն իրենց գործերի վիճակից, իրենց ամառանոցային կյանքից, իրենց երեխաների դասերից, իրենց հոր կամ մոր առողջությունից, մի խոսքով, նրանք ահավոր մի պահանջ ունեն ձեզ հետ խոսելու այն ամենի մասին, ինչը կարող էր տեղի ունենալ այս ընթացքում, երբ այլևս երկրում չէիք, և երբ վաղուց չէիք տեսնվել: Նրանք բացահայտ զարմանքով փաստում են, որ դուք լիովին առնչվում եք նրանց հետ, քանի որ նախօրեին, միևնույն հանգամանքներում, արդեն պատմել են ձեզ: Բայց, դե, փորձեք նրանց հասկացնել: Նման իրավիճակներ հաճախ են պատահում բարեկամների կամ պարզապես ծանոթների միջև:

Ի վերջո, այս ամենը անցյալ է, քանի որ ես նոր աշխատանքի եմ անցել: Քաղաքի մյուս ծայրում գտնվող մի ընկերություն ինձ առաջարկեց ավելի լավ վճարվող և կարևոր պատասխանատվությամբ մի աշխատանք: Այդ պատճառով էլ կնոջս հետ որոշեցինք փոխել մեր բնակարանը: Մենք լքեցինք փողոցի ծայրը և հաստատվեցինք մի շատ գեղեցիկ վերնատանը, որն ընդամենը մի քանի կիլոմետրի վրա է իմ նոր աշխատավայրից և շատ մոտիկ երեխաների դպրոցին: Դա չափազանց գողտրիկ մի թաղ է: Այս ամենը կատարվեց շատ արագ: Իմ վաղեմի բարեկամներից մեկն օգտվելով առիթից, վերագնեց մեր տունը և հաստատվեց այնտեղ: Այսօր առավոտյան հանդիպեցի նրան քաղաքում և ընտանյոք հանդերձ հրավիրեցի մեր տուն ճաշի: Քանի՜ տարի իրար չէինք տեսել և այնքա՜ն բան ունեինք իրար պատմելու:

Թարգմանությունը՝ Ալեքսանդր Թոփչյանի

ԽՈՒԼԻԱՆ ՍԱՆՉԱ

Խուլիան Սանչան (Կադիս, 1988 թ.) իսպանական բանասիրության թեկնածու է, իսպաներենի դասախոս և հետազոտող: Աշխատում է Կադիսի պետական համալսարանում և համագործակցում մի շարք կազմակերպությունների հետ՝ որպես խմբագիր և լեզվաբանական խորհրդատու: Ապրել է Եվրոպայի տարբեր երկրներում, խոսում է 6 լեզուներով՝ իսպաներեն, ֆրանսերեն, կատալերեն, անգլերեն, պորտուգալերեն, ռուսերեն: Իր իսկ վկայությամբ՝ մեծ կիրք ունի գրականության, փիլիսոփայության, կինոյի հանդեպ, բայց առավել պաշտում է սպիտակ թուղթը, որի «դատարկության վախից» (horror vacui) ծնվում է նրա ստեղծարար բնազդը՝ փոխադարձաբար կապված մասնագիտությանը և գեղարվեստական ստեղծագործություններին, որի հետևանքով չի դադարում անընդհատ մշակել գիրը: Խմբագրել է «Զոմբիները կարդալ չգիտեն» (Los zombis no saben leer) (2009-2013թթ.) գրական ամսագիրը: Հեղինակ է պատմվածքների, որոնք տպագրվել են տարբեր անթոլոգիաներում և մրցանակաբաշխություններում, ինչպես օրինակ՝ «Անունս Մարկոս է, և ես Կադիսից եմ» (Me llamo Marcos y soy de Cadiz) (Դոլեն, 2011թ,): Ներկայացվել է նաև բանաստեղծական ժողովածուներում և ամսագրերում՝ «Լիսաբոն» (Lisboa) («Մարեմագնում» ամսագիր, Օվիեդո, 2018թ.), «Հարվածներ» (Golpes) («Ծխի տետրեր» ամսագիր (Cuadernos de Humo), Նյու Յորք, 2018թ.) և այլն:

«Սիլուետները» (Կադիս, Ediciones en Huida հրատ., 2019թ.) պատմվածքների՝ նրա հրատարակած առաջին գիրքն է:

ՍԻԼՈՒԵՏ 2

Սիմայի երազները

Սիմայի երազներն աշնան գալու հետ ավելի դաժան էին դառնում: Առաջինը տեսավ մեկը, որտեղ անհրաժեշտ էր թռչել պատուհանից, որովհետև կրակն սկսում էր այրել փայտե հին ամառանոցը: Արթնանալուց հետո առաջին ախտանշանները շնչահեղձությունն ու սարսափը, գունատ դեմքն ու սառը ձեռքերն էին: Ջառանցանքին ընդմիջում չեղավ, քանի որ հաջորդ գիշերը երազային ապշանքը կրկնվեց: Նրա սավանի տակ և գիտակցությունից հեռու սպասվում էր նույնիսկ ավելի վատ և անգամ՝ անհավանական մի բան, ինչին ստիպված էր առերեսվել, քանի որ դեռևս բացահայտված չէ՝ ինչպես պայքարել անգիտակցականի և անկառավարելիի դեմ: Ինչպիսի անհեթեթություն. ինչքան փոքր ենք մենք, հիմար ու աննշանակալի և, հատկապես, երբ համեմատում ենք մեզ կենդանություն տվողի ու մեր ամբողջ գռեհիկ գոյությունից տասնյակ միլիոնավոր տարիներ առաջ ստեղծվածի հետ:Այն խավար գիշերին Սիման ստիպված եղավ նաև արյունոտ արցունքներով լալ մի մղձավանջում, որտեղ ծեր հայելին ինչն արտացոլում էր, իր հարթ մաշկը չէր, ոչ էլ՝ իր՝ դասական ֆիլմի դերասանուհու ոսկե վարսերը, ոչ էլ՝ հաստ ու կյանքով լեցուն շուրթերը, ոչ էլ՝ սեքսուալ թարթիչները, այլ՝ պարզապես մի մեռյալ դեմք՝ խախտված ոսկորների համախումբ՝ չարագործ ուրվագծի վրա, որը սարսափեցրեց անգամ ասպետական վեպերից դուրս եկած ամենասրամիտ ու խիզախ սուսերամարտիկին: Երեք օր էր անցել. նա նորից ցատկեց մահճակալից՝ քրտնած և բղավոցներով: Սև հագած տղամարդիկ հայտնվել էին սենյակում և սպառնում էին տանել անծանոթ ինչ-որ տեղ: Ինչ կարող էր պատահած լինել Սիմայի մտքում: Ինչ տարօրինակ անտեսանելի իրադարձություններ էին այդքան դաժան դեր խաղացել նրա անձնական և թանկագին երջանկության դեմ: Նա խոշտանգվում էր բոլոր այս հարցերով, որոնց համար դեռ պատասխան չուներ: Հիշում էր, որ մանկուց կարդացել է ֆրոյդյան ցնորային տեսությունները երազների նշանակության մասին և լսել էր, որ երազը, ինչպես ռուսական «Մատրյոշկա» խաղը, կրկնություն է. գուցե մենք երազն ենք մեկ ուրիշի, որը երազ է տեսնում, և այդպես՝ մինչև անսահմանություն կամ գուցե ոչինչ իրական չէ և, եթե նույնիսկ իրական է, ապա միայն ներկայացվում է՝ իբրև այդպիսին: Պատմության ընթացքում փիլիսոփաների, մտավորականների, նաև աշխարհիկ մարդկանց մի մեծ բազմություն կասկածի

տակ է դրել իրականության հյուսվածքները՝ նշելով ճշմարիտի և ֆիզիկականի միջև եղած հեռավորությունը: Դոն Քիշոտը երևակայում էր, որ հմայողների ու հսկաների դեմ պայքարող հեծյալ է: Մարդկության մեծագույն մասը մինչև վերջին ժամը հավատում է ամենակարող աստվածներին: Կես կյանք մենք քնած ենք և չենք էլ հասկանում՝ ինչ է նշանակում դա, չգիտենք՝ ինչ գրողի տարած է կատարվում մեզ հետ, մինչ մեր մկանները թուլանում են, և մեր կոպերը՝ գռեհիկ թատրոնի վարագույրներ, փակում են թատերաշրջանը: Սիման սուզված էր այս բոլոր մտքերի մեջ՝ մինչև մարմինը կհանգստանար նորամուտ աշնան թարմ խոտի վրա, և իրեն հարցեր էր տալիս այդ ահծյալ երազների մասին, որոնց հետևանքով ինքն իրեն այժմ բանտարկյալ ու զոհ էր զգում: Նա սկսեց խաղալ խոտի հետ՝ ձեռքով մեղմորեն պոկելով այն, և հանկարծ, ինչպես շողը, որը ծառը կիսում է երկու մասի, զգաց, որ մեկն իրեն զննում է շատ հեռվից և վախեցած նայեց երկնքին:

Ամիսն արթնացավ աշխարհի այլ տարածքում և չէր հասկանում՝ ո՞վ էր Սիման և ոչ էլ՝ ինչու երազում տեսավ այդ ամենը, բայց ժպտում էր, որովհետև առաջին անգամ նա զգացողություն ունեցավ, թե տիեզերքի բնական համախումբը կարող է մի այդպիսի նշանակություն ունենալ՝ մի վերջին իմաստ կամ առաջին, որը մարդիկ դեռևս չեն անվանել:

ԳԻՐԸ

Մեկը գրում է մի անհատակ բանի բնազդից, ինչպես սիրեկանը, որը մերկանում է առանց ճակատագրի բանաստեղծության մեջ: Կան պատկերներ, որոնք հայտնվում են երազում, և մյուսները, որոնք մեզ երևում են մեր աչքերի առջև, բայց սրանցից և ոչ մեկն էլ չի հաստատում ճշմարտությունը: Ամենը, ինչն ապրում ենք կամ անգամ ինչը կարդում ենք, արտահայտելիի սահմաններից շատ հեռու արձագանք ունի: Լեզուն, բացի այդ, չի օգնում և ոչ էլ նույնիսկ չի մոտեցնում իրականությանը. պոեզիայի կամ գեղեցկության վերջին խնդիրը:

«Սիլուետները» կարող էր լինել պատմությունների օրգանական համախումբ՝ գլխիվայր նկարված կտավ, որտեղ սերը և մահը, արյունը, զառանցանքը և երևակայությունը որոշակի պատում ունեն: Երբեմն առօրեական մասնիկները վերափոխվում են կախարդական ինչ-որ բանի և գոյությունը՝ միշտ զարմանալի, մեզ բորբոքում է նոր բույրի գաղափարով, ֆանտաստիկ ինչ-որ բանով, որը հայտնվում է ինչպես ստվերը՝ դանդաղորեն՝ դռան ետևից: Մենք զննում ենք իրականության ձևերը, բայց երբեք բացարձակ կերպով չհասնելով դրանց. այն մեզնից փախչում է մի պարզ ակնթարթում, որն անվանում

կամ փորձում ենք սահմանել, երբ համարձակվում ենք դնել կաղապարների մեջ: «Սիլուետները» մեր առավելագույն տարակույսների արտահայտումն են: Այն, ինչն իրական է, և այն, ինչը դադարում է այդպիսինը լինել՝ ոչ միայն փիլիսոփայական արտացոլում է, այլև ամբողջ գրի հիմքն ու ծնունդը: Միևնույն ժամանակ նրա համար, ով գրում է այս տառերը, անբաժանելի է վարժանքը՝ մի բան արարելու բուն փաստով, որը սպիտակ թղթից վեր բարձրանալով՝ իր սեփական կյանքն է ստանում և սիլուետներից անդին՝ մեզնից մեծ մասի համար դեռևս անճանաչելի աշխարհների ու մարդկանց մարմիններ թափանցում: Այս գեղարվեստական փոքր երկերը կենտրոնացնում, խտացնում են սարսափներ, մի շարք մտապատկերներ, որոնք խորհրդածում են կյանքի և մահվան շուրջ՝ երբեք չպարզելով հանգուցալուծումը, վերջնական մեկնաբանությունը թողնելով ընթերցողին, որը միշտ դրան սպասում է:

ԿՅԱՆՔԸ ՍԽԱԼՄՈՒՆՔ Է

Սիրելի՛ Կարմեն,

Կյանքը ցավոտ է, քանի որ կյանքը սխալմունք է, դառն ու հրաշալի սխալմունք՝ ասես պոկված երկնքից մի անմեղ աստծո ձեռքով: Աշխարհի առաջին ատոմից մինչև վերջինը, բակտերիաներից մինչև հենց մենք՝ ինքներս՝ մարդ էակներս, փղերը, ընձուղտները, վիրուսները, առարկաները, ողջերն ու մեռածները, ամենը, ինչը պատկանում է այս դատապարտված տիեզերքին, ծագում է միևնույն փորձից, մի շարք մուտացիաներից, անփույթ էվոլյուցիայից՝ կայուն և ծույլ, Գեայի գրկախառնությունից և անդադար ալիքից, որը ի վերջո մեր գոյությունն է: Այդտեղից շարժվում ենք նաև ես ու դու, անգամ մեր սայթաքումները, անխոստովանելի սխալները, արցունքները, որոնք, մեզ կամաչեցնեին, եթե ցանկացած մեկը տեսներ, նաև՝ հարվածները, որոնք, ինչպես մակաբույծ փոխաբերություններ, կպչում են մեր կրծքին և պոկում մի կտոր նրանից, ինչից կարծում ենք, որ արդեն երբևէ նորից չենք զգալու:

Մեզ նվաստացնում են, և մենք մեզ նվաստացնում ենք, ջրի մակերևույթ ենք դուրս գալիս և նորից մի մռայլ ամպ տեսնում, որը կոտրում է մեր հույսը, բայց, գիտե՞ս ինչ, կյանքի գաղտնիքը այդ ամենից շատ անդին է: Քանի որ այդ ամենն ուսումնառություն է և մինչև անգամ՝ մեր սիրելի մարդկանց մեռնելը տեսնելը և հասկանալը, որ մի օր բոլորս ենք անցնելու այդ տրանսով: Ինչպես նաև ավելի անդին է, քան մեր պապիկի հիվանդությունը, որին սիրում ենք, աշխատանքային իրավիճակից ճնշված երիտասարդը կամ կարո-

տաբաղձ ծնողները, որոնք ստիպված են տեսնել, թե ինչպես է իրենց որդին աքսորվում: Տիեզերքի հզորությունը մի բան է, որը վեր է հառնում ցանկացած դժբախտության առաջ, որ միայն որոշ կոնկրետ պահերի ենք ի վիճակի հասկանալու. մի բան է, որը չի ճանաչում ոչ լավ, ոչ վատ, ոչ մթություն, ոչ լույս, ոչ բարություն կամ չարություն, այլ որ ամեն բան համախմբում է, ամեն բան խտացնում ու բացատրում: Մեզ տնկած են թողնում մայթի մեջտեղում նրանք, ում երբեմն ամենից շատ էինք հավատացել՝ սխալմամբ մտածելով, թե ինչ փոքր արժեք ենք, հետևաբար, ունեցել: Մեզ լքում են, և մեզ լքում ենք, բայց և մի օր սովորում արժևորել ամենը, ինչը արել և եղել ենք, ամենը, ինչը մեզ է պատկանում, ինչը երբեք, ոչ մի անհիծյալ դեպքում չեն կարողանա մեզնից գողանալ՝ սովորածը բոլոր անկումներից, հարվածներից, լացերից, պատրանքներից, հույսերից, օծանելիքով խոստումներից և բացարձակապես ամեն ինչից, որ մեր բախտավոր աչքերը տեսել են:

Կա, այնուամենայնիվ, մի գաղափար, որը միշտ հաղթում է՝ անկախ ամեն ինչից, անկախ իրերի ու ժամացույցի սլաքի անկասելի անկումից, ձախողումներից, օտար իրավիճակներին մեր արձագանքներից, որոնք նույնիսկ չենք կարող կառավարել: Եվ դա, քույրիկս, սիրո գաղափարն է, սիրո, որն ամեն ինչի մեջ է, ոչ միայն մի մարդու կամ հուշի մեջ: Սերը, որը շարժում է երկինքը, սարերը և աշխարհը, սերը, որը ստիպում է, որ ամեն բան ունենա միևնույն իմաստը, որ գոյություն չունենա դիտվողը, քանի որ արդեն չկա դիտողը, սերը, որ ստիպում է հասկանալ նույնիսկ ամենասարսափելի թշվառությունները, և որը տալիս է վերջապես միակ իմաստը, որ կյանքն ունի, այն, որը պատկանում է մեզ, այն, որը ներառում ու գրկախառնում է ժամանակի հետ, որը լափում է մեզ: Գիտեմ, որ երբեմն պատրաստ չենք տեսնելու դա, որ որոշ հիասթափություններ կուրացնում են մեզ, և որ ուղեղը՝ բնությունից հոռետես, մեզ փորձում է նետել դեպի այդ հեղհեղուկ ավազը՝ հուսահատությունը: Բայց դա սխալ է. միշտ, միշտ սերը հաղթում է տարբեր կերպերով, քանի որ միակ ձևն է, հանուն որի դեռևս ողջ ենք:

Կուզենայի պատմել քեզ այս ամենը նախկինում, բայց ժամանակ չէինք ունեցել, կամ գուցե դեռևս փորձառությունը մեզ չէր հասցրել համապատասխան պահի ու տեղի, որպեսզի կարողանայիր ստանալ այս նամակը քո ավագ եղբորից, որը միշտ, չնայած բազմաթիվ ու օտար իրավիճակների, եղել ու կլինի քեզ հետ, և որը քեզ սիրում է: Քեզ գրում եմ այս մասին նոր տարին սկսելուց մեկ օր առաջ: Ինձ թվում է՝ ամենապատեհ առիթն է տոնելու այն ամենը, ինչին մինչ այժմ հասել ենք: Միշտ հիշի՛ր. այն ամենի անդունդում, ինչը նույնիսկ չտեսանք, թաքնված են մնում անհամար հրաշալիքներ:

Թարգմանությունը՝ Անահիտ Մարգարյան-Անտոնյանի

ԲՈՐԻՍ ԶԱՅՑԵՎ

ՊԱՍՏԵՌՆԱԿԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Պաստեռնակն իր ջահել տարիքի համեմատ չափազանց հասուն էր, երբ հեղափոխությունը սկսվեց: Նա մեծացել էր կիրթ ու մտավորական ընտանիքում. նրա հայրը հայտնի դիմանկարիչ Լեոնիդ Պաստեռնակն էր, բավական մտերիմ Լև Տոլստոյին և՛ անձնապես, և՛ հոգեպես: Նա նաև նկարել է Տոլստոյի դիմանկարը, նկարազարդել «Հարությունը»:

Գրողի մայրը երաժիշտ էր, և Բորիս Լեոնիդովիչը մանկությունից գիտեր ու սիրում էր երաժշտությունը. մի ժամանակ նույնիսկ ուզում էր պրոֆեսիոնալ երաժիշտ դառնալ: Այդ ամենի հետ մեկտեղ Ռուսաստանում ստացել էր գերազանց կրթություն և շարունակել ու ավարտել էր գերմանական համալսարաններից մեկը: Տիրապետում էր մի քանի օտար լեզուների:

Ես նրան ավելի ջահել ժամանակ անձնապես չեմ ճանաչել: Իմ՝ ավելի ուշ տպավորությամբ Պաստեռնակին պատկերացրել եմ սուր դեմքով, վառվռուն, ներքուստ միայնակ, փնտրող ու խանդավառ մի պատանի: Անտարբերությունն ու գորշությունը երբեք նրան բնորոշ չէին: Նա որոնող էր. այդպիսին էլ մնաց: Եվ որպես բանաստեղծ էլ նույնը մնաց: Սակայն տե՛ս, որ ընտրեց գրականության ճանապարհը: Եվ այդ ճանապարհը համընկավ ամենադժվար ժամանակների հետ. ողջ Ռուսաստանի խորտակման ու վերափոխման, քանդվել,

թափվելու աղմուկի, արյան, բռնության նորությունների հետ (ինչ էլ որ այն արժենար). այն փոթորկի, որը երբեք նպաստավոր չէր նկարիչների ու բանաստեղծների, դե, ընդհանրապես, մենակության և ինքնահայեցության հակված արվեստագետի խառնվածք ունեցողների համար:

Հեղափոխության առաջին իսկ քայլերի հետ ռուս գրականության մեջ արտառոց ձևով աղմկում էին ֆուտուրիստները: Նրանք հայտնվել էին դեռևս Ռուսաստանի մինչհեղափոխական, նախապատերազմյան տարիներին, որոնք լի էին կիսախավար մշուշով և ապագա ցնցումների զգացողությամբ: Բայց ֆուտուրիստներին էլ հենց ցնցումներ էին պետք. դրանց վրա ավելի հեշտ է թռչկոտել, աղմկել, փառաբանվել, քան խաղաղ ժամանակ:

Դեռևս պատերազմից առաջ Մայակովսկին հագնում էր գունավոր կտորներով կարված խեղկատակի պիջակներ, նրա համախոհները իրենց դեմքերը ներկում էին տարբեր ներկերով, և իր զիլ ձայնով այդ Մայակովսկին գոռում էր. «Կորչի՜ Պուշկինը: Արդիականության նավից շպրտե՛լ նրան»:

Խնջույքի ժամանակ՝ հենց հեղափոխության սկզբներին՝ դեռևս «փետրվարյան», դեռևս «անարյուն», Մայակովսկին՝ ֆուտուրիստների առաջնորդը, հրեշավոր տուրուդմփոց սարքեց, և այդ ամենը անպատիժ մնաց. լկտիությունը հաղթեց դեռևս պարկեշտ մնացած ազատական-մշակութային Ռուսաստանին: Իսկ ինչքան հեռու, գործն այնքան ավելի թունդ դարձավ: Մայակովսկին վայրկենապես հաղթողների կողմն անցավ, ավելի ուժեղ գոռաց, շուրջբոլորը շատացան հլու ձայնակցողները, հայտնվեցին Խլեբնիկովի նման «անհասկանալի» բանաստեղծները, «իմաժինիստների» գրական խումբը («կերպարը», «պատկերը». լուսինը համեմատում էին կովի հետ. ահա ի՜նչ պայծառ է):

Դա հեղափոխության ամենահանդուգն և ամենախելառ ժամանակն էր, երբ քանդում էին եկեղեցիները և հրապարակներում կանգնեցնում վատ գիպսից արագ ծեփված Մարքսի ու Էնգելսի արձանները. այդպիսի մի զույգ, հիշում եմ, Մոսկվայում պարզապես ճաքճքել էր սառնամանիքից, հետո ճաքճքեց անձրևի տակ, ինչպես ձյունե տիկնիկը գարնանային արևի ճառագայթներից:

Դա մի շատ ահավոր ժամանակ էր՝ տեռորի, ցրտի, սովի և ամեն տեսակ գազանության: Նշանավոր գրողներից շատերը՝ Մերեժկովսկին, Բունինը, Շմելյովն արդեն վտարանդիության մեջ էին: Բայց Մոսկվայում դեռևս մնացել էր կիրթ, մտավորական խառնվածքի տեր գրողների խումբ, որն իշխանությունից իրեն հեռու էր պահում՝ ինչ-որ կերպ իր գլխի ճարը տեսնելով: Մոսկվայում մենք նույնիսկ Գրողների միություն ունեինք, և ըստ հեղափոխության պարադոքսի՝ իշխանությունը դեռևս պինդ էր պահում «գրականության» վարկը. մեզ

Կայարան գրական ակումբ

տրամադրեցին Գերցենի տունը, որտեղ էլ մենք հավաքվում էինք: Մեր անդամներից ոչ ոք կոմունիստ չէր:

Պաստեռնակն անդամագրված չէր մեր միությանը, թեև ինքն էլ կոմունիստ չէր, իր կրթվածությամբ հավասար էր մեր մակարդակին:

Այնպես որ, Մոսկվայում գոյություն ուներ ասես երկու գրական ուղղություն. մերը՝ Գրողների միությունը՝ ակադեմիական ուղղվածությամբ ու առանց խայտառակությունների, և ֆուտուրիստ-իմաժինիստների միությունը՝ տուրուդմփոցներով: Մենք զուսպ էինք մեզ պահում, բայց ընդդիմության մեջ էինք կառավարության հետ, իսկ նրանք լկտի էին պահում իրենց կառավարության ընդդիմության հետ նրա ամենաստորին հարկերում՝ չեկայի՝ քաղաքական ոստիկանության շրջանակներում:

Այդ ժամանակ իշխանությունը չափազանց շատ էր զբաղված իր միջազգային դրությամբ՝ քաղաքացիական պատերազմով, ապստամբություն ճնշելով, թալանով, որպեսզի ուշադրություն դարձներ մեզ՝ գրող-մտավորականներիս խմբին, որն իր ընթերցումներն էր կազմակերպում Գերցենի տանը: Մենք նույնիսկ փոքր-ինչ ազատություն ունեինք: Բերդյաևին իր բուռն ու փայլուն «Անհավասարության փիլիսոփայությունը» գրքի համար, որը կոմունիզմի դեմ էր, չնստեցրին. այն լույս տեսավ հենց հեղափոխության սկզբին, երբ դեռ կային մասնավոր հրատարակչություններ: 1921 թվականին Այխենվալդը մեզ մոտ՝ միությունում, հիացական զեկուցում կարդաց Գումիլյովի մասին: Տրոցկին Այխենվալդի այդ ընթերցմանը պատասխանեց. «Դիկտատուրա՛, ո՞ւր է քո մտրակը» հոդվածով, սակայն ո՛չ Այխենվալդին, ո՛չ մեր միությանը ձեռք չտվեցին:

Վրա հասավ և նեպի՝ ընդհանրապես որոշ չափով թուլացման շրջանը և մեզ՝ ավագ սերնդի գրողներիս թույլ տվեցին բացել մեր՝ գրողներիս կոոպերատիվ կրպակը, որտեղ մենք ինքնուրույն, առանց իշխանությունից կախում ունենալու կարող էինք հին գրքերով առևտուր անել: Դա մեզ հնարավորություն տվեց սովից չմեռնել:

Հեղափոխության ժամանակների այդ կյանքն ունեցել է նաև հետաքրքիր կողմեր: Մենք այլևս չէինք կարող բացահայտ տպագրվել: Ձեռքով մանրամասն արտագրելով՝ գրում էինք մեր ոչ մեծ գործերը, կազմը ձևավորում էինք սեփական մտահղացումով, երբեմն՝ նկարներով, և վաճառում էինք հենց մեր կրպակում: Նման ձեռագիր ստեղծագործությունների ժողովածուն հենց այդ ժամանակ հայտնվում էր Ռումյանցևյան թանգարանում[1]: Չգիտեմ՝ այնտեղ արդյոք պահպանվե՞լ են դրանք՝ որպես «ընդհատակյա» գրականության նմուշներ (բայց նրանցում քաղաքական ոչինչ չկար):

[1] Հանրային գրադարան Մոսկվայում:

Հեղափոխության այդ բոլոր վատ տարիներին Պաստեռնակի դիրքորոշումը բավական տարօրինակ էր: Նա լուռ նստած էր ինչ-որ տեղ: Չէր մասնակցում ֆուտուրիստների և իմաժինիստների ո՛չ ելույթներին, ո՛չ էլ անկարգություններին: Ելույթ չէր ունենում կասկածելի սրճարաններում, որտեղ խցկվում էին ամեն տեսակ սպեկուլյանտներ, իսկ Մայակովսկու և նրա ձեռքի տակ եղած «բանաստեղծների» նմանները ջարդում էին հենց այդ նույն սպեկուլյանտների շնորհիվ հարստացած նեպմաններին (այդ ժամանակ այդպես էին անվանում հեղափոխության նոր բուրժուաներին): Իսկ նրանց հենց դա էլ դուր էր գալիս, նրանք ծափահարում ու ծիծաղում էին:

Այդպիսի սրճարանները նորություն էին ու շատ ընդունված: Այնտեղ գաղտնի կոկային էին վաճառում, և չեկիստները գրականության ամենացածրակարգ շերտերի հետ մութ գործեր էին անում, կեղտոտ խրախճանքներ սարքում: Դա Եսենինի և Այսեդորա Դունկանի ժամանակն էր՝ այլանդակ հարբեցողությամբ և լիակատար սանձարձակությամբ:

Նման երևույթների նկատմամբ Պաստեռնակը վերաբերմունք չուներ: Բացի նրա իսկական տեսակից, նրա թիկունքում հոր և մոր բարեկրթությունն էր, իսկ հեռվում՝ ինչ-որ տեղ, Լև Տոլստոյի՝ լեգենդ դարձած ստվերը: Սակայն նա իր այն ժամանակվա գրով, այնուամենայնիվ, հարում էր ֆուտուրիզմին և իմաժինիզմին: Դրանք ինչո՞վ էին ձգում նրան: Ավելի ուշ նա կասի. «Մեզ բոլորիս ցնցած հիմնական ու ընդհանուր տարիներին իմ անլրջության պատճառով ես հասցրի շատ բաներ շփոթել և մեղք գործել»: Այդ առումով «ավելի ուշ» նա շատ ավելի խիստ էր իր նկատմամբ, նույնիսկ՝ չափազանց: (Նորից Տոլստոյի ստվերը և ռուս գրականության «ոսկե դարը». հակում ապաշխարանքի):

Բայց այդ ժամանակ, պայմանավորված իր տաքարյուն խառնվածքով, միանգամայն բնական էր, որ նա տարվեր անհասկանալի բաներով և խոսքային ինչ-որ նորարարությամբ, հրապուրվեր նաև համեմատության չափազանցությամբ: Այն ժամանակվա նրա բանաստեղծությունները, որքան հիշում եմ, ասես ինչ-որ մեծ բեկորներ էին նախաստեղծ վիճակում՝ ներդաշնակությանն անտեղյակ: Բայց և ընդհանրապես «ներդաշնակությունը» չէր էլ սազում այդ ժամանակներին, որը լի էր ճիչով ու աններդաշնակությամբ:

Ես չգիտեի մարդկային այն շրջապատը, որտեղ միշտ լինում էր Պաստեռնակը: Նփման միակ կետը հայտնի բանաստեղծ, այն ժամանակ դեռևս երիտասարդ Մարինա Ցվետաևան էր: Նա այն ժամանակվա գրական «ձախ» հոսանքին էր հարում, սակայն իր բանաստեղծությունների ընթերցումով հանդես էր գալիս մեզ մոտ՝ միությունում: Նա ինչ-որ հոգեկան կապվածություն կամ հարազատություն ուներ այն ժամանակվա Պաստեռնակի հետ, սակայն պարզվեց, որ նրանց գրական ճանապարհները տարբեր են: Ցվե-

Կայարան գրական ակումբ

տաևան գնալով ավելի պաճուճագեղ էր դառնում, իսկ նա՝ հակառակը. իր հասունացման ճանապարհին պարզվում էր. մեծագույն քսաներորդ դարի մեր գրականության մեծագույն ուժը:

Չեմ հիշում Պաստեռնակին նաև մեզ մոտ՝ գրողների կրպակում: Մեզ մոտ եղել է Անդրեյ Բելին, նույնիսկ ձեռքով ինչ-որ բան է գրել: Որպես պատվարժան հյուր 1921 թվականին՝ մահվանից քիչ առաջ, Ալեքսանդր Բլոկը: Եսենինը քուրքով և գլխին՝ լայնեզր գլխարկ. այնքան քի՜չ էր դա սազում Ռյազանի նահանգից ելած նրա պատանեկան հասարակ դեմքին (այդ ժամանակ Այսեդորա Դունկանի հետ նա իրեն տվել էր հարբեցողության և ընկերություն էր անում շատ կասկածելի մարդկանց հետ):

Դե, այնուամենայնիվ, Պաստեռնակի հետ ես ծանոթ էի. ինչ-որ տեղ հպանցիկ հանդիպել էինք, իսկ հետո հանդիպել էինք իմ տանը՝ իմ հսկա սենյակում, որտեղ ապրում էի կնոջս և աղջկաս հետ. սենյակի մեջտեղում վառում էինք վառարանը, որ տեղադրել էին որմնադիրները՝ երկաթե խողովակներն անցկացնելով ողջ շենքի միջով:

Պաստեռնակի հետ հանդիպումը ես մտապահել էի հատկապես, որովհետև այդ հանդիպումը տարբերվում էր գրական մեկ այլ՝ «անհասկանալի» բանաստեղծ Խլեբնիկովի հետ հանդիպումից ճիշտ այդ նույն սենյակում, բայց որոշ ժամանակ առաջ:

Խլեբնիկովը հարում էր ֆուտուրիզմի ինչ-որ կասկածելի մի խմբակցության: Նրան համարում էին (ճիշտ է՝ քչերը) «տարօրինակ»: Պոեզիայի բերկրանքը, ինչքան հիշում եմ, նրա համար սահմանափակվում էր ընտրությամբ անիմաստ բառերի, որոնցից ինչ-որ երաժշտություն էր լսվում: Իր «անսովորությամբ» ու «նորարարությամբ» դա համապատասխանում էր հեղափոխության դարաշրջանին, բովանդակությամբ՝ ամենևին:

Սակայն, այնուամենայնիվ, նա իշխանությունների հետ ինչ-որ կապեր ուներ, և նրա հետևորդներն ունեին մեքենա, որի վրա փակցրել էին կարգախոս՝ «Երկրագնդի նախագահները»:

Թե ինչու նա եկավ ինձ մոտ, չգիտեմ: Ինքը՝ այդ նախագահը, բավական համեստ մարդ էր, վատ հագնված, փոքր-ինչ հիմար տեսքով, ավելի շատ գետնին էր նայում և խոսում էր կամաց: Ինչ-որ ձևով նա ինձ նաև դուր եկավ, հավանաբար իր անպաշտպանությամբ ու մանկամտությամբ: Եթե հիշողությունս չի դավաճանում, հենց այդ ժամանակ էլ առաջարկեց ինձ ման տալ այդ համաշխարհային ավտոմեքենայով՝ ճիշտ նույն կերպ տարօրինակ ու ամաչկոտ նայելով ներքև՝ հատակին: Երկրագնդի նախագա՜հը: Այնուամենայնիվ, լավ է հնչում, ես շնորհակալություն հայտնեցի ու հրաժարվեցի:

-Դե, այդ դեպքում եկեք մեզ մոտ՝ Մյասնիցկայա: Մերոնք այնտեղ են

հավաքվում: Բանաստեղծություններ կլինեն: Իսկ մեծերից էլ՝ լուրջ մարդիկ: Սիմվոլիստներից Վյաչեսլավ Իվանովը:

Նա շունչ քաշեց և ասես մտածկոտ ավելացրեց.

- Լինելու է շատ խորիմաստ ու ցոփ:

Թե ինչու ցոփ, չբացատրեց: Ես էլ չպնդեցի:

Երիտասարդն ինքնին ոչ մի տգեղ բան չէր արել, բայց նրա համախոհներին ես հստակ էի պատկերացնում, առավել ևս, ոչ այնքան վաղ Պիլնյակը ինձ հրավիրել էր մի երեկոյի Մոսկվայում ապրող հայտնի քանդակագործի արվարձանային տանը, որտեղ պետք է լինեին Եսենինը, Դունկանը, և լավ կերուխում: Ես ավելի ուշ իմացա, որ այդ ամենն ավարտվել էր այլանդակ տուրուդմփոցով. դրա մասին նույնիսկ անհնար է գրել: Խլեբնիկովի և նրա ընկերների մոտ նույնպես չգնացի:

Պաստեռնակի այցելությունը (այն ժամանակվա Պաստեռնակին կարող էին դուր գալ Խլեբնիկովի բանաստեղծությունները) միանգամայն այլ էր: Նա ո՛չ ավտոմեքենա ուներ, ո՛չ էլ իրեն Երկրագնդի նախագահ էր երևակայում: Այդ բարձրահասակ, խոշոր դիմագծերով, մարմնով փոքր-ինչ անհամաչափ, խոշոր ձեռքերով և նյարդային, բայց շատ խելացի աչքերով երեսնամյա մարդն ինձ բերել էր ձեռագիրը: Մի հատված իր արձակ ստեղծագործությունից: Ձեռագիրն իր տեսքով նույնպես նման էր իր տիրոջը. գրված էր խոշոր, լայն-լայն տառերով, նարդային ու արտահայտիչ: Նա եկավ այնպես, ինչպես կրտսեր գրողն է գալիս մեծի մոտ՝ ցույց տալու օրինակ իր արձակից. նա այդ արհեստով քիչ էր զբաղվել, ես՝ շատ: Ես ո՛չ խմբագիր էի, ո՛չ հրատարակիչ, ո՛չ էլ իշխանությունից ինչ-որ մեկի ընկերը: Ավելի շատ աղքատ էի ապրում: Այն, որ ինձ էր բերել իր ձեռագիրը, նշանակում էր, որ նրա համար էլ ոչ ոք չկար: Ես անգամ չկարողացա նրան մի կարգին նախաճաշով կամ ճաշով հյուրասիրել. հեղափոխական դարաշրջանի կենցաղն աղքատ է:

Մենք նստել էինք պատուհանի մոտ՝ իմ սեղանի առաջ, որտեղ ձեռագրեր էին, և պարզ ընկերական տոնով խոսում էինք գրականությունից, իսկ կինս տեր ու տնօրինություն էր անում սենյակի մեջտեղի հենց այն քարե վառարանի մոտ: Ձմեռային մեծականջ գլխարկը գլխին տասնամյա մեր աղջիկն էլ, որ հենց նոր էր եկել խորհրդային դպրոցից, համեստորեն դասավորում էր իր տետրերը՝ թեթևակիորեն տարուբերելով երկու ժապավեններով հյուսքերը: Պաստեռնակն ամենանորի, գրականության մեջ «առաջավորի» հանդեպ ունեցած իր ողջ վերաբերմունքով նույնպես համեստ էր և ինձ հետ խոսում էր ոչ ամենևին ֆուտուրիստների նման: Նա ճիշտ ինը տարի՝ օրը օրին, փոքր էր ինձնից, սակայն նրան ընդհանրապես բնորոշ էր երիտասարդական ոգին, բացսրտությունն ու ուղղամտությունը: Ասես ծովային թարմ քամի լի-

Կայարան գրական ատոմ

ներ: «Պատանեկությունը հավերժորեն կմնա Պաստեռնակի մեջ»,- ասել է մեր նշանավոր բանաստեղծուհի Աննա Ախմատովան: Շատ ճշմարիտ է ասված, ինչքան որ կարող եմ դատել հեռվից: Երիտասարդ ու բաց, համակրելի:

Պարզվեց՝ ձեռագիրը հատված էր բավական մեծ պատումից: Նկարագրվում էր մանկությունը Ուրալում՝ լեռնային գործարանում:

Մանրամասնությունը չեմ հիշում, սակայն ընդհանուր տպավորությունն այսպիսին էր. ո՛չ մի ծիչ, ո՛չ մի ֆուտուրիզմ. գրված էր մարդկային և ոչ թե անհեթեթ լեզվով, գրված էր շատ ինքնատիպ: Այսինքն՝ նման չէր ոչ մեկին և այդ պատճառով նոր էր: Նոր, որովհետև տաղանդավոր էր: Տաղանդն էլ հենց անկրկնելի անհատականության արտահայտությունն է, բնական այնպիսի բան, որ ստեղծել է Տեր Աստված և ոչ թե պարտադրված ինչ-որ գրական ուղղություն:

Ինչքան գիտեմ, այն հատվածները (գլուխները), որոնք նա ինձ էր բերել այն ժամանակ, տեղ գտան «Լյուվերսի մանկությունը» գրքում՝ ուշ, բայց «Դոկտոր Ժիվագո»-ից շատ ավելի վաղ հրատարակված Խորհրդային Ռուսաստանում: Ես չունեմ այդ «Լյուվերսի մանկությունը»: Լիովին կասկածում եմ, որ այդ ամենը դեռևս ոչ համարձակ մոտեցումներ են ավելի ուշ «Դոկտոր Ժիվագո»-ի: Կարելի էր ամենաանկեղծ ձևով (ինչը ես արեցի) ողջունել արձակի իմ նոր ընկերոջը, սակայն ոչ մի կերպ չէր կարելի կանխագուշակել ապագա ճակատագիրը այդ խոշոր դիմագծերով, խոշոր մարմնով, ոչ ճարպիկ երիտասարդ գրողի, որի մեջ հոգևոր մեծ լիցքեր կային: Հնարավոր չէր կանխագուշակել և նրա ապագա համաշխարհային փառքը:

* * *

1922 թվականի աշնանը մեր միության համարյա ողջ վարչությանը Պետրոգրադից ուրիշ գրողների և պրոֆեսորների խմբի հետ ուղարկեցին արտասահման: Դա Տրոցկու ձեռքի գործն էր: Դրա համար պետք է երախտապարտ լինեինք նրան. դա ոմանց հնարավորություն տվեց իրենց կյանքն ապրել ազատության և մշակույթի պայմաններում: Հենց Բերդյաևի համար դա համաշխարհային ճանաչման ճանապարհ հարթեց:

1922 թվականի Բեռլինը ռուս մտավորականների համար դարձավ կենտրոն: Այդտեղ միաժամանակ հանգրվանել էին նրանք, ովքեր արտաքսվել էին, և նրանք, ովքեր գնացել էին իրենց կամքով (Անդրեյ Բելի, Պաստեռնակ, Մարինա Ցվետաևա), նաև նրանք, ում ուղարկել էին: Փարիզից՝ վտարանդիությունից, Ռուսաստան վերադառնալով՝ այդտեղ հայտնվեց նաև կոմս Ալեքսեյ Տոլստոյը՝ ի վերջո հետագայում դառնալով Ստալինի պալատականը

և Խորհրդային Ռուսաստանի գրական առաջին բուրժուաներից մեկը:

Բեռլինում ես Պաստեռնակին տեսնում էի շատ հպանցիկ, կարծեմ գրական հանդիպումների ժամանակ՝ Նոլլենդորֆպլաց սրճարանում: Եվ այդ ամենը շարունակվեց ոչ երկար. 23 թվականին սկսվեց մեկնումը: Մի մասն ընտրեց Իտալիա-Փարիզ ուղղությունը, մյուսները վերադարձան Մոսկվա: Վերջին երեքն էին՝ Ալեքսեյ Տոլստոյը, Անդրեյ Բելին և Պաստեռնակը: Այնտեղ նրանց ճակատագիրը տարբեր կերպ դասավորվեց: Ալեքսեյ Տոլստոյն ունեցավ տուն, մեքենա, ինչքան որ հնարավոր է, զվարճությունների և հարբեցողության հնարավորություն, և ինչքան որ կարողացավ, սողաց Ստալինի առաջ: Անդրեյ Բելին քաղաքականության մեջ միշտ հակված էր դեպի ձախերը, նույնպես աշխատում էր ողջ ուժով, բայց ոչինչ չէր ստացվում: Նրա կերպարանքին չէին սազում ամառանոցները, փողը, այլանդակությունը. նա երբեք ճարպիկ ու քծնող չէր եղել: Իսկ գրվածքներն էլ՝ հոգու ֆանտաստիկ կերտվածքն ու անսովոր լեզուն, այդտեղ թվում էին ծիծաղելի ու անհասկանալի, և այդ իսկ պատճառով՝ ոչ պիտանի: Նրա կյանքը Ռուսաստանում շատ դժվար էր: Նա վախճանվեց 30-ական թվականներին:

Այն ժամանակ, սակայն, ԽՍՀՄ վերադարձածներից ամենաբարդը Պաստեռնակի ճակատագիրն էր: Քաղաքական առումով «աջ» թեքումներ նա երբեք չի ունեցել: Դեռևս երիտասարդ տարիքից նրան ավելի շատ բնորոշ է եղել ձգտումը ձախի: Ինչքան ես գիտեմ, նա ունի նաև այդ ոգով գրված ստեղծագործություն. «Լեյտենանտ Շմիդտ»: Կարծում եմ՝ 1917 թվականի հոկտեմբերյան հեղաշրջումը նա ընդունեց, սակայն ինչքան ժամանակն առաջ գնաց, այնքան նա դժվարին վիճակում հայտնվեց: Նրա կյանքը չափազանց ինքնուրույն էր, հրամանի չենթարկվող, խիստ անձնական: Թե ներքուստ ինչ էր զգում, դատելը դժվար է, սակայն «Դոկտոր Ժիվագո» վեպից և որոշ մասնակի խոսակցություններից կարելի է շատ բաներ կռահել: Լև Տոլստոյին մտերիմ նկարչի որդուն, որ մեծացել էր այն ժամանակվա բարձր մշակույթի մթնոլորտում, ոչ մի կերպ հարիր չէր տեռորի, արյան և «ստալինյան դարաշրջանի» բիրտ ուժի ճանապարհը:

1937 թվականին Խորհրդային Ռուսաստանի գրողների մեջ Պաստեռնակը թերևս միակն էր, որ չստորագրեց գրողների կոլեկտիվ դիմումի տակ՝ մահվան դատապարտելու նախկին բոլշևիկ մտավորականների մի ողջ խմբի, որն ինչ-որ բանով հավանություն չէր տվել Ստալինին: Պետք է հասկացողություն ունենաս այն ժամանակվա Ռուսաստանի կյանքի, դեսպոտիզմի լծի տակ մարդկանց անսահման ճնշման մասին, որ բավականին գնահատես գրողի արիությունը, որ, հակառակ ամեն ինչին, ասել է «ոչ»:

Այդ ժամանակ նրա կինը հղի էր: Մի՞թե նրան հեշտ էր այդ «ոչ» ասելը: Նա

շատ լավ գիտեր իր առանձնահատուկ տեսակը, որ պահանջում էր անսովոր «հոգեկան փնտրտուքների ազատություն»: Իհարկե, նա հասկանում էր, թե ինքը որքան «ոչ հարմար» ամուսին է, հայր, ընտանիքի գլխավոր: Բայց ահա ամեն ինչ դրեց խաղաթղթի վրա, չվախեցավ և... հաղթեց: Նրան ձեռք չտվեցին: Ճիշտ է, նաև ոչինչ չտպագրեցին բացի թարգմանություններից. նա թարգմանում էր և՛ Շեքսպիրին, և՛ Գյոթեին (հիմա կարծես Ռաբինդրանաթ Թագորին):

Նրա համար, ինչ խոսք, դժվար տարիներ էին: Բայց դրանք, իհարկե, նորից տակնուվրա արեցին նրա հոգին: Հիմա նա բոլորովին այն չէ, ինչ երիտասարդ տարիներին էր: Դժվար է պատկերացնել. այն Պաստեռնակը, որին մի ժամանակ հանդիպել եմ Մոսկվայում, ավելի ուշ Բեռլինում, որ գրում էր կցկտուր, քաոսային բանաստեղծություններ, կարո՞ղ էր գրել ավետարանական թեմաներով: Իսկ գրեց նորից յուրովի, բայց ակնածանքով:

Այո՛, իհարկե, նաև այն ժամանակ էր լավ արձակ ստեղծում, սակայն նա պետք է անցներ երկար ու տանջալից ճանապարհ՝ կրելով մենակության, օտարացած լինելու խաչը, շուրջբոլորը տեսնելով տառապանք, անմարդկային փորձանքներ քծնողների ու կեղծավորների, մոլեռանդների ու պարզապես սրիկաների մեջ, որպեսզի հասներ Քրիստոսի ճշմարտությանը՝ մարդու նկատմամբ սիրուն, գթությանը, կարեկցանքին ու հարգանքին՝ մարդու մեջ ճանաչելով ոչ թե ռոբոտին ու մեքենային, այլ Աստծո պատկերին:

Իր վաղ շրջանի գրածներից նա հրաժարվեց: Հրաժարվեց և Մայակովսկուց: Խորհրդային Ռուսաստանում ապաշխարանքի ձայնն է: Օ՜, ոչ «կուսակցության» առջև այն ապաշխարանքի, որ պետք է հանուն պաշտոնի լինի, այդ պատճառով էլ ողորմելի է, կեղծ ու նվաստացուցիչ: Ո՛չ, նա ունի անշահախնդիր ու ներքին ձայն՝ առանց իշխանություն ունեցողների ոտքերն ընկնելու: Մի ժամանակ Մայակովսկին իր հորդայի հետ գոռում էր. «Կորչի՜ Պուշկինը»: Պաստեռնակը չի գոռում, այլ պարզապես հեռանում է այդ Մայակովսկուց. նրանց ճանապարհները տարբեր են:

«Մենակություն և ազատություն». շատ դիպուկ այսպես է բնութագրում քննադատ ու բանաստեղծ Ադամովիչը վտարանդիության մեջ գտնվող ռուս գրողի վիճակը: Մենակություն և ոչ ազատություն. այդպես կարելի էր ասել Պաստեռնակի մասին Ռուսաստանում:

Եվ ահա բոլորի համար անսպասելի հայտնվեց նրա «Դոկտոր Ժիվագո» վեպը: Վեպն արժանացավ լայնածավալ գրական արձագանքների: Լույս տեսավ համարյա բոլոր եվրոպական լեզուներով, հեղինակը դրա համար Նոբելյան մրցանակ ստացավ, միայն թե գիրքը չկա Ռուսաստանում: Սակայն ԽՍՀՄ անթիվ «հանրապետությունների» ներկայացուցիչները՝ ընդհուպ ինգուշներն ու չուվաշները, այդ «Ժիվագո»-ից տող անգամ չկարդացած,

«խիստ դատապարտեցին» այն, հեղինակին ամեն կերպ թունավորեցին, իսկ խորհրդային մի Հերոստրատ էլ Մոսկվայում՝ մի ժողովի ժամանակ, ոչ այլ ոքի, քան Խրուշչովի ներկայությամբ հայտարարեց, որ Պաստեռնակը «խոզից ավելի վատն է» (այդ «ընկերոջ» փառքը ակնթարթային դարձավ: Ակնթարթային էլ կմոռացվի նրա սին անունը):

Իրականում «Դոկտոր Ժիվագո»-ն նշանավոր ստեղծագործություն է՝ ո՛չ «աջ» է, ո՛չ «ձախ», պարզապես հեղափոխական դարաշրջանի մասին վեպ է, որ գրել է անկեղծ, մաքուր ու ճշմարիտ բանաստեղծը՝ լի քրիստոնեական հումանիզմով, մարդու մասին բարձր կարծիքով՝ ոչ այնպես ցածրարվեստ, իհարկե, ինչպես Գորկին է ասում. «Մարդ. հպարտ է հնչում»: Պաստեռնակի վեպում չկան անձաշակ բաներ, ինչպես որ չկան կեցվածքներ ու հոգեկան շինծուություններ: Վեպը շատ ճիշտ է նկարագրում հեղափոխության դարաշրջանը, սակայն պրոպագանդա չի անում: Եվ երբեք իսկական արվեստը պրոպագանդայի թերթիկ չի եղել:

1960

Մեկ անգամ եվս Պաստեռնակի մասին

Նրա «Ինքնակենսագրական նշումներ»-ից ես իմացա մի մանրուք, որ ծառայել է որպես նամակագրության սկիզբ. մենք ծնվել ենք ճիշտ նույն ամսվա ճիշտ նույն օրը, միայն թե նա ինձնից՝ ինը տարի ուշ:

Ես բախտի բերմամբ գրեցի իրեն և՛ համընկման, և՛ ուրիշ բանի մասին: Դրանից էլ սկսվեց: Տարօրինակ, հեռակա, կարճ վեպ:

1959 թվականի մարտի 15-ին նա ինձ պատասխանեց այսպես. «Թանկագին Բորիս Կոստանդինովիչ, չեմ կարող Ձեզ հաղորդել, թե ինչպես Դուք ինձ ուրախացրիք Ձեր նամակով: Գրեթե ոչ ոք գլխի չի ընկնում, թե ինչ հաճախ եմ ինքս ինձ համար ուրիշ կյանք ուզում, ինչքան հաճախ եմ տխուր ու սարսափելի վիճակներում հայտնվում ինքս իմ պատճառով, իմ դժբախտ տեսակի պատճառով. այդ տեսակը պահանջում է այնպիսի հոգևոր փնտրտուքների ազատություն և արտահայտություն, ինչը, հավանաբար, չկա ոչ մի տեղ, իմ դարձդարձիկ ճակատագրի պատճառով, որ տառապանք է պատճառում հարազատներիս: Ձեր նամակը հասավ ճիշտ այդպիսի տանջալից տխրության պահի: Շնորհակալություն Ձեզ»:

Նրա համար «չափազանց թանկ է», որ ես խոսում եմ իր գրքի մասին,

բայց. «Դուք ինչ էլ ասեիք, ես այդ ամենը կընդունեի մեծագույն երախտագիտությամբ»: «Ինչ հեքիաթային է, ինչ անհավատալի: Ճիշտ չէ՞ արդյոք: Գրում ու մտովի տեսնում եմ Ձեզ իմ առջև և աչքերիս չեմ հավատում: Ե՛վ երախտապարտ եմ, և՛ գրկում եմ...»:

Ինձ գրած նրա նամակներն այստեղ մեծ արձագանք ունեցան: Միշտ խնդրում էին դրանք բարձրաձայն կարդալ: Այդ առումով ես նրան գրեցի Պետրարկայի մասին: Պետրարկայի նամակները, որ Ավինոնից հասնում էին Ֆլորենցիա բարեկամներին, այնտեղ համարվում էին իրադարձություն: Ստացողը հրավիրում էր բարեկամներին, ճաշկերույթ կազմակերպում, հետո ընթերցվում էին նամակները՝ որպես բարձրակարգ աղանդեր: Ֆլորենցիայի մերձակայքի ավազակները, որ թալանում էին հյուսիսից եկող վաճառականներին (հենց նրանք էլ տանում էին նամակները), բարձր էին գնահատում, եթե թալանի մեջ լինում էին Պետրարկայի նամակներից. կարելի էր թանկ վաճառել:

Պետրարկայի մասին իմ նամակը, հավանաբար, նրան ցավ էր պատճառել: Սակայն ես պատասխան չստացա. պատասխան նամակը չհասավ: Որ այն չի հասել, երևում է իմ աղջկան գրած նրա նամակից («Իմ հիացմունքը կորա՜վ ճանապարհին »), այո՛, ակնհայտ է, նա ստացել և պատասխանել է իրեն բնորոշ-մանկական-հիացական հրճվանքով, բայց, հավանաբար, ղեկավարությունը որոշել է, որ այդպես գրել վտարանդի մարդուն... դա արդեն չափազանց է:

Նամակագրությունը, այնուամենայնիվ, շարունակվում էր: 1959 թ. հոկտեմբերի 4-ի նամակում նա գրում էր իր պիեսի[1] մասին. «Ինձ ցանկացեք, որ դրսից չնախատեսվածը չխանգարի ընթացքին ու նաև հեռավորին՝ ինձ հափշտակած աշխատանքի ավարտին: Անտարբերության պահից, ինչպես ես էի տրամադրված պիեսի նկատմամբ, այն վերածվեց մի իրավիճակի, երբ երեսառաջությունը կամ փորձը դարձան նվիրական զբաղմունք կամ էլ եռանդուն աշխատանք: Պետք չէ չափազանցել իմ վիճակի դիմացկունությունը: Այն երբեք չի դառնա հաստատուն ու հուսալի»:

1960 թվականի փետրվարյան վերջին նամակում նա ինձ շնորհավորել էր ծննդյանս օրվա առթիվ: Նույն խանդավառությունն ու նրբությունը: Նույն բացմանկական հոգին (զուր չէ նրա մասին Ախմատովան ասում, որ նա հավերժ երիտասարդ է մնալու: Այո՛, նա երիտասարդ էր հոգով՝ անկասկած լի մեծ եռանդով: Բայց երբեմն զայրանում էր: Մոլեգնորեն: Նման տեսակ մարդկանց ինչ տանջալից է լծի տակ ապրելը):

Ահա թե էլ ինչ է գրում մահվանից քիչ առաջվա նամակում. «Այս ամենն

1 Խոսքը վերաբերում էր Պաստեռնակի «Կույր գեղեցկուհին» պիեսին, որի վրա նա աշխատում էր իր կյանքի վերջին տարիներին:

(իմ գրքերը: Ես ուղարկել էի նրան: Դրանք տեղ էին հասել:) ընկան ինձ համար թանկ ու ագահ ձեռքը հերոսուհի-բարեկամի, որն իմ պատճառով կյանքում հերթով ստացել և ստանում է՝ բառի և գործի ամենաուղիղ իմաստով»:

«Բայց Ձեզ, անձնապես Ձեզ ես ուզում եմ սրբորեն ու երդումի պես խոստանալ և ինձ կապել այդ երդումով, որ վաղվանից ամեն ինչ կդրվի մի կողմ. աշխատանքը կեռա և կշարժվի մեռյալ կետից (խոսքը պիեսի մասին է)»:

Ոչինչ չգիտեմ այդ պիեսի ճակատագրի մասին: Անգամ չգիտեմ՝ ավարտվա՞ծ է այն: Հավանաբար՝ ոչ: Գիտեմ, սակայն, որ մեծ թափի գործ է, կարծես՝ տրիպտիխ է:

Չէ՞ որ գիտեմ կյանքի դրաման և դրա առջև հարգանքով ու տխրությամբ գլուխ եմ խոնարհում:

Այո՛, առասպելական տարի: Փետրվարյան նամակից ավելի քան երեք ամիս անց՝ 1960 թվականի մայիսի 30-ին Բորիս Լեոնիդովիչը վախճանվեց: Խորհրդային իշխանության համար բավական հարմար. համաշխարհային փառքով ոչ հարմար գրողը, որ կանգնած էր կոկորդներին, հեռացավ: Դե ինչ, թունավորեցին մարդուն, Նոբելյան մրցանակից հետո թունավորեցին, հետո բուժեցին, բուժեցին, բայց նա մահացավ: Ամեն ինչ կարգին է:

Մնաց գերեզմանը, հարազատների վիշտը: Իմ տանը՝ սրբապատկերի տակ, այդ գերեզմանից վարսակի մի փունջ կա: Եվ ինչ-որ տեղ պիեսի ձեռագիրը:

Սկսվում է դրամայի երկրորդ մասը: Իմ առջև մի շատ լավ լուսանկար է. ինչ-որ ծառի տակ կանգնած է Պաստեռնակը՝ գլուխը թեթևակի խոնարհած, աչքերը կկոցած, բայց ուրախ չէ: Աջից նրան թևանցուկ է արել ռուս մի կին՝ բլուզով, գիրուկ, սիրո ժպիտով ժպտալով: Ձախից ռուսական հաճելի դեմքով միանգամայն դեռափթիթ մի աղջնակ է՝ նույնպես թևանցուկ է արել, նրա աչքերը նույնպես ժպտում են հիացմունքով: Նա ամբողջովին պատանեկություն է ու հմայք:

Այդ երկուսը Օլգա Իվինսկայան և իր դուստրն են: Այն Իվինսկայան, որի՝ «ինձ համար թանկ ու ագահ ձեռքն» ընկան իմ գրքերը, մինչ Բորիս Լեոնիդովիչը կկարդար դրանք: Նա «Դոկտոր Ժիվագո»-ի Լարան է, ամեն ինչ պարզ է: Այդ նրա երեխաներին (նա այրի է)՝ Իրինային ու Դմիտրիին հովանավորեց Պաստեռնակը, երբ Ստալինի ժամանակներում Օլգան նստած էր բանտում, իսկ նրանք դեռ երեխա էին: Այդ նա՝ Օլգա Իվինսկայան էր անհանգստանում նրա համար, երբ Նոբելյան մրցանակից հետո խորհրդային ոչ գրական բակապահ շնիկները հաչում էին նրա վրա, գոռում, թե նա խոզից էլ վատն է: Այդ նրա մասին էր Պաստեռնակն ասում, թե՝ նա «իմ պատճառով կյանքում հերթով ստացել է և ստանում է»:

Եվ կանխազգալով՝ տառապում էր: «Կստանա» բառը չէր ավելացրել,

Կայարան գրական ամսագիր

բայց շատ էր տագնապում: Նա հիմա միայն գերեզմանից կարող է տեսնել, թե ինչպես դատեցին Օլգային. Իրինային նույնպես դատեցին: Ստոր ձևով դատեցին. փակ դռների հետևում: Յոթ տարով դատապարտեցին մորը, երեք տարով՝ աղջկան: Մայրը մեղավոր էր, որ Սերջիո Անջելոն՝ նախկին իտալացի կոմունիստն ու Ֆելտրինելլի հրատարակչության աշխատակիցը, Իվինսկայայի միջոցով Պաստեռնակին էր փոխանցել Արևմուտքի նրա հոնորարներից և 1960 թվականի հուլիսին (հենց Պաստեռնակի կենդանության օրոք իր իսկ խնդրանքով) ինչ-որ մի գումար էլ՝ Օլգային: Նրան դատեցին 15-րդ հոդվածով (զենքի, պայթուցիկ նյութերի, թմրանյութերի մաքսանենգություն և այլն): Իսկ աղջի՞կը: Աղջկան մեղադրեցին, որ դա գիտեր, և նախապես մորը չէր մատնել: Դատի ժամանակ Իրինան, լսելով մեղադրանքը, գիտակցությունը կորցրեց: (Դրանից առաջ նրան արդեն շատ սիրելի «նվեր» էին մատուցել. հարսանիքից մի քանի օր առաջ Ռուսաստանից վտարել էին նրա երտասարդ ֆրանսիացի փեսացուին): Այո՛, այդ լուսանկարը՝ Պաստեռնակը Օլգայի և Իրինայի մեջտեղում, սուր ցավ է պատճառում: Բորիս Լեոնիդովիչը հարազատ հողում է, թող այն թեթև լինի նրա վրա: Իսկ նրա մասին հիշողությունը բարի է ու երախտապարտ, երբեմն՝ լի հիացմունքով, և այն երկար կմնա կյանքի ընթացքում իրեն այդքան վիշտ պատճառած այդ հայրենի հողում: Այնտեղ հավերժ չի մնա նաև ոստիկանական տեղամասը: Պաստեռնակի լավագույն ստեղծագործությունը՝ «Դոկտոր Ժիվագոն»՝ արարչական «Օգոստոս» բանաստեղծությամբ: Կենդանության օրոք նկարագրեց իր թաղումն այնպես, ինչպես այն եղավ: Եվ Լարային էլ կյանքում հավերժ հրաժեշտ տվեց: Տերն ազատեց նրան Օլգայի և Իրինայի վերջին Գողգոթայի տեսարանից: Նայելով նրանց երկուսին՝ անպաշտպան և հիմա «ինչ-որ մի տեղում» տանջվելով, նույնիսկ շփոթմունքի մեջ ես ընկնում: Ինչ-որ անհարմարություն ես զգում քո սեփական ազատությունից: Ահա դու ապրում, քայլում ես, զգում ես, սիրում, տառապում, բայց դու ազատության մեջ ես և ապրում ես մարդկային պայմաններում: Իսկ նրա՞նք: Թող Աստված ուժ տա նրանց: Ինչպես գրված է Ջենովայի մերձակայքում իտալական մի համեստ տեղանքին մոտիկ զանգակատանը. «Dominus det tibi fortitudinem»[1].

* * *

Ժամանակն առաջ է գնում: Պաստեռնակն ավելի ու ավելի գնում է Հավերժություն: Երեք կեչի նրա գերեզմանին նույն ձևով աղմկում են մոսկովյան քամուց: Ձմռանը նրա կիսանդրին կդրվի գերեզմանին:

Սակայն եթե անընդհատ նրան հիշում ես, ուրեմն մարդը տիրապետում

1 Թող Աստված քեզ ապրելու ուժ տա (լատիներեն):

էր հմայելու գաղտնիքին: Ինչո՞ւ «Դոկտոր Ժիվագոն» երկու անգամ բարձրաձայն ընթերցելուց հետո շատ բան գորշ ու անհետաքրքիր է թվում: Հենց դա էլ իշխանության հանելուկն է: Քանի որ չկա արվեստագետ առանց իշխանության: Միայն թե այդ իշխանությունը վզիդ փաթաթված չէ, նրանով ոչ ոք չի սպառնում քեզ, տեղամաս չի տանում, այլ ինքն է անտեսանելիորեն տիրում քեզ: Ոչ ոք ինձ չի հրամայել գնահատել Տյուտչևին, և ահա ինքն է տիրել ինձ առանց ճիչի ու արդեն չի հեռանում:

Պաստեռնակի վերջին օրերի մասին պատմելիս նրա կինը լրագրողին ասել է, թե նա մահանալիս ամենից շատ ափսոսում էր, որ այլևս գրել չի կարող: Գրո՜ղ, ես ճանաչում եմ քեզ: Մեր հիվանդությունն անբուժելի է: Ճանաչում եմ և քո ոգու ջահելությունը, թեև քո կեցությունը հասել էր արդեն արարչական սահմանին («Մեր կյանքի օրերը ընդամենը մինչև յոթանասունն են, իսկ իմաստնությունը՝ մինչև ութսունը»): Նրա Ժիվագոն՝ բժիշկը, թվում է՝ մեծ է հեղինակից (ներքուստ), ավելի թախծոտ է և հուսահատ: (Տայգայից նա Մոսկվա է վերադառնում արդեն փշրված նավով): Հոգնություն, տխրություն հենց իր՝ Պաստեռնակի մեջ, նրա նամակներից չես զգում: Կյանքում նա շատ բուռն է տառապել, բայց հասուն տարիքում՝ ոչ, երբեք անտարբեր ու զառամ չի եղել: Այս ձմռանը ինձ մտերիմ մեկը տեսել է նրան Պերեդելկինոյում. ըստ նրա՝ Պաստեռնակը շատ կենսախինդ էր ու աշխույժ:

Իսկ գրականությունն ու արվեստը խորը, ամուր էին նրա մեջ: Կարծում եմ՝ հատկապես իր տաքարյունության ու երիտասարդությանը բնորոշ անառողջ մտքի պատճառով էր նա մի ժամանակ Մայակովսկու հետ նույն խմբում, տարուբերվում էր նաև հեղափոխության մեջ. ինչ-որ բան նրան դուր էր գալիս այդ ամենի մեջ: Սակայն եկավ նաև հատուցման ժամը: Մահից քիչ առաջ դատապարտում էր իրեն. «Մեզ բոլորիս ցնցած հիմնական ու ընդհանուր տարիներին ես՝ իմ անլրջության պատճառով, հասցրի շատ բաներ շփոթել և մեղք գործել...»: «Ամենուր շտապում էին թարգմանել և հրատարակել այն ամենը, ինչը ես հասցրել էի թոթովել ու խզմզել հատկապես այդ հիմար վայրիացած տարիներին, երբ ես ոչ միայն դեռ գրել ու կարդալ չգիտեի, այլ ընկերասիրությունից դրդված և հոգուտ տիրող ճաշակի՝ փորձում էի ոչինչ չսովորել: Ինչ դատարկ էր դա ու լի շատախոսությամբ, ինչ էլ որ չնշանակեր որևէ բանի բացակայությունը, բացի մաքուր և կատարելապես անպիտան դատարկաբանությունից»:

«Իմ կյանքը հեռու է հարթ լինելուց. ես շրջապատված եմ հոգսերով, անհանգստությամբ, և ամեն քայլիս սպառնում են, թեթև ասած, անսպասելիությունները: Սակայն դառնությունների մեջ հազիվ թե առաջին տեղը չզբաղեցնեն սարսափն ու հուսահատությունը այն պատճառով, որ ամենուր լույս

Կայարան գրական ակումբ

աշխարհ են բերում և հավանություն տալիս դրանց, ինչը ես ուրախ կլինեի մեկ անգամ ևս մոռանալ, և ինչ մտածում էի՝ մատնել մոռացության...»:

Նա իր երիտասարդության մասին դատում է չափազանցված, դաժան խստությամբ, բայց որքան լավ է այդ ինքնահիացումն ու գեղեցկացումը հայելու առջև: Նրա մեջ դա չկար, թեև փառքը, ավելի ճիշտ մարդկանց սերը, նա, այնուամենայնիվ, սիրում էր, բայց դա այնպե՞ս մարդկային էր: «Ընդհանրապես, կատարած աշխատանքի և տհաճությունների համար լավագույն պարգևատրումն այն է, որ դարի լավագույն գրողները գիրք էին կարդում՝ մեկը ուրիշ լեզվով, մյուսն էլ՝ բնագրով»: Ինչ հեքիաթային է այդ ամենը, ինչ անհավատալի»:

Ապշեցուցիչ են նրա սեփական ճակատագրի ելևէջումները: «Եվ միայն այդ առասպելական տարին բացեց իմ առջև հոգեկան անցախուցերը, սակայն միանգամայն այլ կողմից: Ե՛վ Ֆաուստի մասին ես գրեցի գերմաներեն ՝ Շտուտգարդից եղած հարցմանն ի պատասխան, որտեղ կան Faust GedenkstՊtte[1], և՛ Լոնդոնում անգլերեն Ռաբինդրանաթ Թագորի (բոլորովին ոչ հիացական) կենսագրությունը, և՛ Իտալիայում՝ ֆրանսերեն ժամանակակից բանաստեղծի նշանակության մասին: Եվ թեթևացա: Բայց ինչ տարօրինակ է այդ ամենը, այնպես չէ՞: Պարզվում է՝ կարելի է և մտածել»: Այսինքն՝ մտածել, ինչպես դու ես ուզում, ինչպես մտածում ես, և ոչ թե ինչպես կուղորդեն: «Ես «Ֆաուստը ուղարկել եմ Ձեր աղջկան»: Ահա թե ինչ ափսոսանքով ու ցավով են ուղեկցվում իմ այս տարվա աշխատանքները: Ոչ մի դեպքում ինձ թույլ չտվեցին այդ աշխատանքներին կից սեփական առաջաբան ուղարկել: Իսկ գուցե հենց դրա համա՞ր եմ թարգմանել Գյոթեին, Շեքսպիրին: Ինչ-որ բացառիկ, անսպասելի մի բան միշտ ի հայտ է եկել այդ դեպքում և այն էլ՝ ինչպե՞ս: Միշտ ձգե՞լ է այդ նորը՝ կենդանի մտածված և հակիրճ տեղեկացրած: Բայց այդ «մտավոր աշխատանքի» համար մենք ունենք այլ մասնագետներ, մեր գործը միայն ռիթմերը հարմարեցնելն է»:

Այո՛, և Լոզինսկին (Ռուսաստանում «Աստվածային կատակերգության» թարգմանիչը) ստիպված եղավ հարևանություն անել առաջաբանի հետ, որտեղ Մարքսը և Էնգելսը հավանություն են տալիս բանաստեղծին և նրան տալիս են ուղեգիր դեպի խորհրդային հրատարակչություն: Դանթեի համար հարկավոր եղան Մարքսն ու Էնգելսը, իսկ «Ֆաուստ»-ի՝ Պաստեռնակի թարգմանության ներածության մեջ ստիպված եղան ընթերցողներին բացատրել, որ պոեմում հաճախ հանդիպող Աստված բառը պետք է հասկանալ ոչ այն իմաստով, ինչը որ է, այլ հատուկ («պիկկվիկյան» իմաստով-Ջ.Բ.) , այսինքն՝ Աստված ըստ էության Աստված չէ, այլ նման է ինչ-որ «սոցիալական հարաբերությունների ուժերի»:

1 Պատմական Ֆաուստի ծննդավայրը:

Պաստեռնակի ճակատագիրը մեր գրականության ամենազարմանալի ճակատագրերից մեկն է՝ ողբերգականի և հերոսականի նրբերանգով: Ստալինի ժամանակ ողջ մնալ (հրաժարվելով միջնորդագիր ստորագրել աջ կոմունիստների մի ամբողջ խմբի մահապատժի ենթարկելուց), տարիներով միայնակ նստել Պերեդելկինոյում, հանկարծ ստանալ Նոբելյան մրցանակ, ողջ աշխարհում հայտնի դառնալ «Դոկտոր Ժիվագո» վեպով, սիրել Հայրենիքն այնպես, ինչպես նա և արտասահմանցիների որոտընդոստ ծափահարությունների պահին «յուրայիններից» ստանալ ապտակ հենց այդ 1959-ին՝ նրա համար «առասպելական» այդ տարում:

Պաստեռնակն ուժեղ մարդ էր: Այնուամենայնիվ, նման հալածանքն օրեր չի ավելացնում: Ինչ արած, հասան իրենց ուզածին: Օրերը կրճատեցին: «Առասպելական» տարին, համաշխարհային փառքի տարին, պարզվեց՝ վերջինն է: Գրականության ոստիկանները կարող են հանգիստ լինել. չկա Պաստեռնակը: Ահա արդեն կես տարի է, ինչ ննջում է նա դաժան հայրենիքի հայրենի հողում: Փառավոր լուսանկարները (արտասահմանյան) մեզ համար տպավորիչ դարձրին նրա թաղումը և նրա դեմքը՝ բաց դագաղում. այդ դեմքը հատուկ, բարձր ու հանդիսավոր տեսք ուներ: Դագաղը շրջապատված էր սիրելիներով. իրենց ուսերին նրա սիրելիները ինչ-որ վերստերով տանում են նրան դեպի գերեզմանոց, ճիշտ նույն բաց դագաղով, ինչպես իմ մանկության տարիներին ռուսական գյուղում ննջեցյալներին էին տանում. ռուսական դեմքերը, ռուսական անտառը, կեչիները, որոնց կողքով անցնում էր թափորը, ռուսական փայտե կամրջակը՝ այնքան աննշան իր պարզությամբ, սակայն նրա վրայով բարեհաջող ձգվում է հազար և ավելի մարդկային ժապավենը. այդ ամենը խոցում է: Դանդաղ, բայց սիրով և առանց մուրճ ու մանգաղի Պաստեռնակն առաջ է շարժվում դեպի հավերժություն:

Մոսկվայից կնոջս Պաստեռնակի գերեզմանից ուղարկել էին վարսակի երկու փոքրիկ փունջ: Երկուսն էլ տանը դրված էին սրբապատկերի տակ որպես փառապանծ մասունքներ սիրո և հիշողության. մեր Պաստեռնակը, մեր հողը սնել է նրան, ինչպես այդ համեստ չորացած վարսակը:

Եվ ահա մեզ այցելեց արտասահմանցի թարգմանչուհի և Պաստեռնակի երկրպագուհի կոմսուհի Պրուայրը: Կինս մի փունջը նրան տվեց: Նա գրկեց կնոջս և համբուրեց: Ֆրանսուհու աչքերը նույնպես արցունքոտվեցին, ինչպես արցունքոտվում են ռուսների աչքերը: Եվ դա լավ է: Եվ դա ուրախալի է: Ֆրանսիան իր կրծքին սեղմեց ռուսական վարսակի խեղճ փունջը և այն տարավ իր հետ որպես հիշողություն, որպես սիրո նշան:

Ռուսերենից թարգմանեց Կարինե Մեսրոպյանը

Կայարան գրական ամսագիր

ՆԱՆԵ

ԸՆՏԱՆԻՔԸ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԹԻՐԱԽՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Կան մնայուն, անփոփոխ, Բարձրյալի կողմից մեզ տրված արժեքներ, որոնց մենք կրում ենք մեր արյան, մեր գենի ամենասրբազան խորքերում: Եվ ժամանակները որքան էլ հոսեն, ինչ զարգացումներ էլ մեզ՝ կտրելով անգամ ինքներս մեզնից, խելահեղ թռիչքների տանելով, նույնքան խելահեղ բարձունքների հասցնեն, միևնույն է, այդ արժեքները մարդկության համար մնում են նույնչափ կարևոր, մեր հոգու և էության ամենաանհրաժեշտ բաղադրիչը... Այլ բան է՝ կարևորվա՞ծ, թե՞ անտեսված, փայփայվա՞ծ, թե՞ ջնջված: Դրանք մարդու հոգու ողնաշարն են ասես, որը եթե խախտվեց, փշրվեց՝ մարդ ասվածն արդեն դադարում է իր ճիշտ գոյությամբ շարունակվել:

Ավելի ճիշտ, երբ այդ ի վերուստ տրվածն ու աստվածայինը ջնջվում են մարդկային հոգում և փոխարինվում կեղծ ու սխալ արժեքներով, այլևս խոսել Աստված և մարդ կապի մասին, լիարժեք մարդ ասվածի մասին՝ անհեթեթ է դառնում:

Այդ հաստատուն արժեքներից մեկն ընտանիքն է:

Այն կյանքի զարգացումների արդյունք չէ, առաջին մարդկանց հետ արդեն՝ ծնողական նվիրվածության և պատասխանատվության ձևով, որպես՝ Աստծուց թելադրված գոյատևության կարևոր պայման, ընտանիքի ձևավորումը ինքնաբուխ կերպով իր ընթացքն է սկսել: Այդ նույն թելադրանքն է դրված նաև թռչուն-

ների ու կենդանիների մեջ, որոնք նույնպես, երբեմն անգամ ինքնազրկման ու զոհաբերությունների գնով ձագուկներին մեծացնում ու հանձնում են կյանքին:

Այլ կերպ լինել չէր կարող: Նոր աշխարհ եկած էակը չէր կարող ճիշտ ձևավորվել ու կայանալ կյանքի դժվարին երթի համար, եթե չլինեին ընտանեկան ջերմությունն ու տաքուկ գիրկը, ծնողների գուրգուրանքը, նրանց կյանքի դասերը:

Բնականաբար, քրիստոնեական շրջանում ընտանիքի դերն ու ամրությունն ավելի են կարևորվում, ավելի ճշտվում է դրանց աստվածային նախակերպը:

Եվ նույնքան էլ բնական է, որ նոր ժամանակներում, գլոբալիզացիա և այլ բազում անուններով գործընթացը իր՝ Աստծուն և մարդուն ընդդեմ հրեշավոր ծրագրերով ու նպատակներով պետք է առաջին հերթին հենց փորձեր խարխլել այդ աստվածային արժեքները՝ դրանք փոխարինելով լրիվ հակառակով՝ չարի արժեքներով և պատվիրաններով:

Ընտանիքն ինքը, լինելով քրիստոնեական արժեք, նաև իր հիմքում հենց քրիստոնեական արժեքներն ունի որպես գոյատևության երաշխիք՝ սեր, նվիրվածություն, բարոյական որոշակի չափանիշներ:

Դրանց դեմ առանձին պայքարելն էլ անուղղակիորեն գործում է ընտանիքի դեմ:

Փաստորեն ուղղակի և անուղղակի, բոլոր հնարավոր և անհնար միջոցներով ձգտում են կազմալուծել ընտանիքը:

Դա համաշխարհայնականների վերջնական նպատակների մեջ կարևորներից մեկն է:

Որովհետև ազգի շաղախն ու հիմքը լինելուց բացի, այն նաև մարդ անհատի ճիշտ ձևավորման՝ սիրո, գուրգուրանքի, ավանդական արժեքներով դաստիարակության օրրանն է ու մարդու գոյության և կյանքի իմաստը:

Չկա ընտանիք՝ չկա մարդ ասվածը իր՝ ի վերուստ վերապահված դերով: Դա արդեն մի ողբերգական, միայնակ, իմաստազուրկ էակ է, որը զուրկ է կյանքը իմաստավորող արժեքներից, որոնց համար կարող էր անգամ պայքարել:

Նրան, բնականաբար, կարելի է շատ հեշտ ղեկավարել, ուղղորդել, տիրել, ոչնչացնել: Բաժանիր, որ տիրես: Ոչնչացրու ընտանիքը՝ միմյանց արյամբ ու բնազդով նվիրված մարդկանց այդ միավորումը, և կկարողանաս խեղճ ու անպաշտպան մարդ-միավորին հանել հաշվից:

Իսկ չէ որ արդեն, հայտնի հաշվարկներով, վեց միլիարդը ավելորդ է այս մոլորակում: Մոլորակին իշխելու պատրաստվողներին կես միլիարդ ստրուկները լիուլի բավարար են:

Եվ, սկզբում գործելով գաղտնաբար ու դավադիր խորամանկությամբ, նրանք շատ բան հաջողեցին և հաջողում են... Կարճ ժամանակահատվածում գլոբալիստները մարդասիրական, խաղաղասիրական ամենատարբեր անուններով ու դիմակներով քողարկված սողոսկեցին երկրներից ներս, խառնվեցին

նրանց կյանքին ու ավերած դուրս եկան կամ դեռ շարունակում են ավերել: Մենք բոլորս ենք տեսնում, թե ինչպես արդեն մոլորակով մեկ ծավալվում ու տիրաբար իշխում է ստորը, դաժանը, ցածրը, գարշելին, անբարոն ու գռեհիկը: Այդպես կարելի է թվել ու թվել: Հիմնականն արվել է, և հիմա նրանք այնքան էլ թաքնվելու կարիքը չունեն:

Նրանք գիտեն, որ մենք գիտենք: Պարզապես արդեն ուժն ու խոսքի իրավունքն իրենց ձեռքում է:

Բոլորին է պարզ, թե դրսում ինչ հաջողություններ կան ընտանիքների քայքայման հարցում: Ամերիկյան, եվրոպական ընտանիք ասվածն արդեն իսկական ընտանիքի հեռու նմանությունն է միայն՝ իր թույլ ու երերուն հիմքով: Ծնող-երեխա հարաբերությունները չունեն այլևս այն իրական կերպը, որն անհրաժեշտ է ճիշտ երեխա-մարդ-անհատ դաստիարակելու համար: Եվ երեխան դաստիարակվում է դրսում, դրսից՝ բռնությամբ, շեղվածով ու անբարոյով լեփլեցուն հեռուստաթերթերով...և այլնով: Մի խոսքով, արդեն պետք է ընդունենք, որ ոչ միայն դրսում, այլև հենց մեզ մոտ էլ հիմնականում երեխաներին դաստիարակում են համաշխարհայնականները...

Եվ բնական է, որ այդպիսին է դառնում հասարակությունը՝ խեղված, սուր զգայությունների, հաճույքների, բռնության մոլուցքով բռնված:

Դրսում արդեն երկրներ կան, որտեղ երեխաներից զրկում են ծնողներին, ինչ է թե նրանք երեխային տեղեկացրել են նրա սեռային պատկանելիությունը: Չէ որ դա այժմ ամեն մարդ ինքը պետք է որոշի: Սա արդեն չարի բացահայտ քրքիջն է, խայտառակության գագաթը, որի դեմ գրեթե ոչինչ չի արվում: Մարդու իրավունքների անվան տակ արդեն մարդուն չարից ոտնահար մի խղճուկ գոյության են դատապարտում օր օրի ավելի ու ավելի: Եվ դա հիմնականում հաջողվում է քրիստոնեական երկրներում ... Ինչո՞ւ...

Ցավալի է լսել, թե ինչպես են եվրոպական եկեղեցիներում անգամ այդ շեղված բարքերն իրենց շեմից ներս թողնում և օրհնում անգամ:

Փաստորեն, այն արժեքները, որոնք հենց ընտանիքի ամրության հիմքն են, օգտագործվում են որպես ընտանիքի ներսում անընդունելի և այն խաթարող երևույթներ, առիթ դառնում ընտանիքը ոչնչացնելուն: Աբսուրդ, ծուռ հայելիների աշխարհ...

Բայց թողնենք դրսի աշխարհն ու գանք մեզ: Համասեռամոլությունը, այդ սոդոմգոմորյան ախտը դրսում պարտադրանքով, խորամանկությամբ, ինչպես ասես տարածելով, այժմ փորձում են այլասերել մեր երկիրը համառորեն փաթաթելով մեր պարանոցներին: Ընդդիմանո՞ւմ ենք ինչպես պետքն է, կարծում եմ՝ ո՛չ:

Սակայն մեզ մոտ դեռևս երեխաներին ծնողներից վերցնելու համար այն օգտագործել չեն կարող: Այս հարցում դեռ ճանապարհ ունեն անցնելու:

Բայց էլ ինչի՞ համար են համաշխարհայնականների բազում հոգեբանա-

կան ինստիտուտները՝ Թավիստոկի ինստիտուտ և այլն, որտեղ մանրակրկիտ կերպով մշակվում են մարդկությունը հնազանդ ստրուկների վերածելու մեխանիզմները... ինչի՞ համար են, որ արագ չկարողանան ամեն երկրի համար տվյալ պահին ավելի հարմար մեխանիզմ գտնել:

Եվ ահա, որպես այս պահի համար պատրաստի «մեղադրանք» ընտրվել է հայ ընտանիքներում իբրև թե առկա բռնությունների խնդիրը: Երբ սա հարց էլ չէ. եթե անգամ իրական բռնության ներկայությունը կա, ամուսիններին բաժանվել ոչ ոք չի արգելում: Արդեն կազմակերպություններ կան լրջորեն այդ ընտանեկան բռնություն կոչված հարցով զբաղվող: Բնականաբար, ոմանք գոհ են աշխատանք և փող գտած լինելուց, որոշ կանայք էլ՝ իրենց հանդեպ ուշադրության ու հոգատարության այս ցույցերից: Իսկ հոգատարության պակաս հիմա ով ասես չունի:

Եվ առաջին հայացքից անմեղ ու մարդասիրական միջամտությունն ու չակերտավոր օգնությունը հայ կանանց՝ իրականում խիստ վտանգավոր մի նպատակի միտված գործընթաց են:

Երբ պահը գա, ամուսնուն որպես բռնակալ, կնոջը՝ կամազուրկ համարելով, հանգիստ կարող են մեզ մոտ էլ անել այն, ինչ արվում է այժմ որոշ երկրներում: Երեխաներին կվերցնեն ծնողներից: Այն էլ հայ երեխաներին: Ողջ աշխարհը գիտի մեր գենի բարձրորակ լինելը, և ողջ աշխարհն է այն իրենով անելու տարբեր հնարանքներ փնտրում: Մինչդեռ հայ ընտանիքում տղամարդու դերի կարևորումը և դրա շնորհիվ նրա կերպարի խիստ լինելը մեր ազգի պատմության ու նրա գոյատևության խնդիրների հետ է ձևավորվել: Եվ ինչ-որ տեղ ազգի պաշտպանության մեխանիզմում իր կարևոր դերն ունի:

Այս ձևով շատ այլ հարցեր էլ փորձեցին բարերարի անվան տակ լուծել մեզ մոտ՝ ասենք հենց աղքատության վերացման ծրագիրը: Այն ավարտվեց երկրում աղքատությունն ու գործազրկությունն ավելի անլուծելի հարց դարձրած և դեռ աշխատասեր ազգի կերպարին գումարված մուրացկանությունն ու ծուլությունը: Չէ որ չնչին նպաստից չզրկվելու պատճառով շատերը հրաժարվում են նույն չափի չնչին աշխատավարձից: Պարզ, հասկանալի թակարդ: Իսկ այդ ամենը նույնպես դառնում է խնդիր ընտանիքի գոյատևության համար:

Ընտանիքի թուլացման գործում ոչ պակաս կարևոր է լուրջ խնդիր դարձած՝ սերունդների միջև խորացող անդունդը: Այստեղ դարձյալ գործի դրվեց նույն մոտեցումը՝ մի խմբի (փոքրամասնության) նկատմամբ ուռճացված ուշադրությունը մյուս խմբի (մեծամասնության) հաշվին: Իհարկե, արդյունքում երկուսի համար էլ բացասական ելքի պայմանով: Այլ կերպ ասած, դարձյալ՝ բաժանիր, որ տիրես:

Մարդկանց՝ երիտասարդությունից այն կողմ գտնվող, հասուն, գիտելիքներով ու փորձով հարուստ, եռանդուն, կյանքի իսկական որակ ապահովող մասը հայտն-

Կայարան գրական ամսագիր

վեց կյանքից դուրս վիճակում: Երիտասարդությունը նորմալ կերպով ընդունեց իր գերակայությունը՝ այդպիսով հրաժարվելով մեծի հանդեպ ավանդական հարգալից և ակնածալից վերաբերմունքից: Դա և մեծահասակներին է զրկում լիարժեք մարդ լինելու գիտակցումից և դերից, և երիտասարդին: Քանի որ վերջինս այլևս իր համար չունի փորձառու և իմաստուն օրինակ և առաջնորդող: Մեր եթերը ողողված է (և ոչ միայն եթերը) կյանքից ոչինչ չհասկացող, բայց բոլորին կյանքի դաս տվող այդպիսի «ջահելությամբ»: Այս կերպ ազգը հեռու գնալ չի կարող:

Ամեն դեպքում, համաշխարհայնականների համար հայ ընտանիքի հետ կապված գլխացավանքը շատ է: Մեր արյան զորությունն իրենն անում է: Շատ արվածի դիմաց դեռ քիչն են հաջողում: Այստեղ նորից օգնության են գալիս հոգեբանական ինստիտուտները՝ հանճարեղ լուծում գտնելով: Եթե դժվարություններ կան ընտանիքը երկրի ներսում խարխլելու գործում, այդ գործընթացը կարելի է կազմակերպել երկրից դուրս: Հայ ընտանիքը իր պապերի հողից հեռու անպաշտպան ու անզոր մի բան է դառնում, ինչպես Արշակ Երկրորդ արքան Անհուշ բերդում՝ օտարի հողին ոտք դնելիս:

Եվ ահա մեծ թափ ստացած արտագաղթը: Նրանց համար կարևոր շատ հարցերի հետ նաև այս մեկն է ավելի հեշտացված ու արագ տարբերակով լուծում:

Բայց պարզապես քննարկելու, զարմանալու ժամանակները վաղուց անցել են:

Այս խարդախ ժամանակներում գոյատևելու համար լուրջ հակակշիռ է պետք ստեղծել նրանց ամեն մի քայլին: Քանի որ այս մարտահրավերները նորմալ պատերազմների պես սովորական կռվի կանոններով չեն ընթանում և հենց դրանով էլ ավելի են վտանգավոր, նույն կերպ էլ՝ ոչ սովորական կանոններով, առավել ճկունությամբ պետք է լինի դրանց հակազդելը: Ճակատ ճակատի իհարկե հնարավոր էլ չէ, բայց ինչպես իրենք սկզբում, մենք էլ՝ որտեղ պետք է՝ քողարկված, որտեղ հնարավոր է՝ բացահայտ, պետք է մեր պայքարը ծավալենք: Պետք է ընդդիմանալ այն ամենին, ինչ պարտադրանքով արդեն մեծ չափով մեր իրականությունն է դարձել: Ջնջում են մեր մշակույթը՝ այն ավելի շեշտված պետք է ներկայացնենք, բարոյականությունն են խարխլում, ավելի ամրացնենք այն և այլն, և այլն: Միաժամանակ, բնականաբար, աշխարհի բեմին միավորվելու համար փնտրելով ամեն մի ուժ, որը նրանց դեմ է ձևավորվում՝ «Իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է» սկզբունքով:

Եվ ընտանիքի ամրության համար պետք է լրջորեն լուծում պահանջել արտագաղթին, գործազրկությանը, վերջ դնել այս մարդ-անհատի ուռճացված իրավունքների պաշտպանությանը՝ ազգի, մեծամասնության հաշվին, երկիրը ազատ ու վայրի շուկայի և օլիգարխիական բռնատիրության վերածած վայրի կապիտալիզմին, և այդ ամենը մեզ համառորեն պարտադրող Եվրամիության գիրկը նետվելու ջանքերին:

Կայարան
ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

КАЯРАН

альманах

современная проза

Հրատարակչության խմբագիր՝
Գալյա Հովհաննիսյան-Կիրակոսյան

Համակարգչային ձևավորումը՝
Լիանա Մինասյանի

Կազմի ձևավորումը՝
Ալվարդ Օհանջանյանի

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 70x100 1/16
Ծավալը՝ 4 տպ. մամուլ
Տառատեսակը՝ Ghabuzian Mymekh
Տպաքանակը՝ 200

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Թումանեան 12
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

EDIT PRINT
12 Toumanyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am